

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԼՈՒԻԶԻԴՈՒՆ ԸՆԴԴԵՍ ԹՈՒՐԹԻՎՅԻ ԳՈՐԾԸ
CASE OF LOUIZIDU v. TURKEY

Դատարանի 1996թ. նոյեմբերի 28-ի
վճիռը

Ստրասբուրգ

Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նիստ գումարելով՝ համաձայն
Դատարանի A կանոնակարգի (2) 51-րդ կանոնի, որպես Մեծ պալատ՝ դատավորների
հետևյալ կազմով՝ պրն Լ. Ռիսդալ, նախագահ, պրն Լ. Բերնհարդտ, պրն Ն. Գյուլքուբլու,
պրն Լ.-Ի. Փետիտ, պրն Բ. ՈՒՈԼՂ, պրն Ա. Սփիլման, պրն Խ. Կ. Մարթենս, տկն Ի. Փալմ,
պրն Լ. Փեկանեն, պրն Ա. Ն. Լուիզու, պրն Ջ. Մ. Սորենիլա, պրն Ա.Բ. Բակա, պրն Մ. Ա.
Լոպես Ռոշա, պրն Լ. Վիլդիաբեր, պրն Գ. Միֆսուդ Բոնիչի, պրն Պ. Ջամբրել, պրն Յու,
Լոհմուս,

ինչպես նաև պրն Յ. Փետզոլդ, Քարտուղար, և պրն Փ. Ջ. Սահոնի, Քարտուղարի
տեղակալ,

1995թ. հոկտեմբերի 24-ի, 1996թ. հունվարի 24-ի և նոյեմբերի 28-ի դռնփակ
խորհրդակցություններից հետո նշված վերջին օրը, կայացրել է հետևյալ վճիռը՝

Վարույթը

1. Գործը Դատարան է հանձնվել Կիպրոսի կառավարության կողմից («Կիպրոսի
կառավարություն») 1993թ. նոյեմբերի 9-ին՝ Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 32-րդ
հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում:
Գործի համար առիթ է հանդիսացել 1989թ. հուլիսի 22-ին Կիպրոսի քաղաքացի՝
տկն Թիթինա Լուիզիդուի՝ 25-րդ հոդվածի համաձայն Մարդու իրավունքների
եվրոպական հանձնաժողով («Հանձնաժողով») ընդդեմ Թուրքիայի
Հանրապետության («Թուրքիայի կառավարություն») ներկայացրած գանգատը
(թիվ 15318/89):

2. 1995թ. մարտի 23-ի վճռում Դատարանը մերժել է Թուրքիայի կառավարության
նախնական տարբեր առարկությունները (Շարքեր Ա., թիվ 310), սակայն ըստ
էության հարցերին միացրել է *ratione temporis* նախնական առարկությունը: 1996թ.
դեկտեմբերի 18-ի իր՝ ըստ էության վճռում Դատարանը մերժել է վարույթի *ratione*
temporis առարկությունը՝ հայտարարելով, որ դիմողին՝ Յյուսիսային Կիպրոսում
գտնվող իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու
շարունակական մերժումը և իր գույքի նկատմամբ վերահսկողության կորուստը
Թուրքիայի «իրավագործության» սահմաններում են՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի
իմաստով, և Թուրքիան պատասխանատու է դրա համար: Դատարանը նաև գտել է,
որ 25-րդ և 46-րդ հոդվածների համաձայն ներկայացված հայտարարություններին
կցված տարածքային սահմանափակումները չունեն օրենքի ուժ, ինչպես նաև այն,
որ հայտարարություններում տեղ գտած՝ Հանձնաժողովի և Դատարանի
իրավասությունների ճանաչմանը վերաբերող որոշ կետեր իրավագոր էին:

3. Որպես Պալատի նախագահ (21-րդ կանոն, կետ 6)՝ պրն Ռ. Ռիսդալը,
գործելով Քարտուղարի միջոցով, գործի ըստ էության քննությունը
կազմակերպելու համար խորհրդակցել է կառավարությունների
ներկայացուցիչների, դիմողի փաստաբանի և Հանձնաժողովի պատվիրակի
հետ (կանոններ 37, կետ 1 և 38): Համաձայն դրա արդյունքում ընդունված
կարգադրության՝ Քարտուղարը ստացել է դիմողի և Կիպրոսի ու Թուրքիայի
կառավարությունների գրավոր բացատրությունները համապատասխանաբար

1995թ. հունիսի 29-ին, հուլիսի 17-ին և հուլիսի 18-ին: Օգոստոսի 2-ի նամակում Հանձնաժողովի քարտուղարի տեղակալը տեղեկացրել է Դատարանի քարտուղարին, որ պատվիրակն իր բացատրությունները կներկայացնի նիստի ժամանակ:

4. 1995թ. սեպտեմբերի 13-ին, հետևելով Նախագահի սեպտեմբերի 8-ի նամակում տեղ գտած պահանջին, Հանձնաժողովը, դիմողը և Կիպրոսի ու Թուրքիայի կառավարությունները ներկայացրել են իրենց բացատրությունները Դատարանում վարույթի ընթացքում այդ պահին եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից դեռ քննարկվող՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ Քրիստոստոմոսը և Պապաքրիստոմոսն ընդդեմ Թուրքիայի գործի կապակցությամբ՝ գաղտնի զեկույցը վկայակոչելու հարցի վերաբերյալ:

5. Համաձայն Նախագահի որոշման՝ գործի ըստ էության քննությունը տեղի է ունեցել դռնբաց նիստում, Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում՝ 1995թ. սեպտեմբերի 25-ին: Դատարանը նախօրոք կազմակերպել էր նախապատրաստական խորհրդակցություն:

Դատարանում կողմերին ներկայացրել են՝

(ա) Թուրքիայի կառավարությունը՝

պրն Բ. Սազլարը,
պրն Թ. Յոզկարուլը,
պրն Ի. Ապականը,
պրն Հ. Գոլսոնգը,
տկն Դ. Աքչեյը,
պրն Օ. Կորեյը,
պրն Ջ. Նեկատաջիլը
փաստաբան.

ներկայացուցիչ,

(բ) Կիպրոսի կառավարությունը՝

պրն Ա. Մարկիդեսը, Գլխավոր դատախազ,
ներկայացուցիչ,
պրն Տրիանտաֆիլիդեսը,
փաստաբան,
պրն Մ. Շոուն, փաստաբան,
տկն Կ. Փոլիքրոնիդուն, Ա՝ Հանրապետության ներկայացուցիչ,
տկն Ս.Մ. Ջոանիդեսը, Ա՝ Հանրապետության ներկայացուցիչ,
փաստաբան,
պրն Փ. Պոլիվիուն,
փաստաբան,
տկն Ս.Փալեյը, Արտաքին գործերի նախարարության խորհրդական,
պրն Ն. Էմիլիուն, Արտաքին գործերի նախարարության խորհրդական
խորհրդատուներ.

(գ) Հանձնաժողովը՝

պրն Ս. Թրեչսելը
պատվիրակ

(դ) Դիմողին՝

պրն Ա. Դեմետրիադեսը,
փաստաբան,

պրն Ի. Բրունլի Քյու Սին,
օրդ Ի. Լուզիդուն, փաստաբան

խորհրդատու:

Դատարանը լսել է պրն Թրեչսելին, պրն Դեմետրիադեսին, պրն Բրունլիին, պրն Մարկիդեսին, պրն Շուլին, պրն Սազլարին, տկն Դ. Աքչեյին, պրն Նեկատաջիլին, պրն Գոլսոնգին, ինչպես նաև Դատարանի կողմից ուղղված հարցերի պատասխանները:

6. 1995թ. սեպտեմբերի 26-ին պրն Մաքրոնալդը՝ համաձայն Դատարանի A կանոնակարգի 24-րդ կանոնի 3-րդ կետի, ինքնաբացարկ է հայտնել Մեծ պալատի կազմից: Այս կանոնին համապատասխան՝ նա տեղեկացրել է Նախագահին, որը նրան ազատել է նիստին մասնակցելուց:

7. 1995թ. սեպտեմբերի 27-ին Նախագահը Թուրքիայի կառավարությունից ստացել է դատավոր Մաքրոնալդին Պալատի կազմից հեռացնելու խնդրանք: Դատարանը որոշել է, որ, հաշվի առնելով դատավոր Մաքրոնալդի վերոնշյալ ինքնաբացարկը՝ պատասխան տալու կարիք չկա:

8. 1995թ. հոկտեմբերի 6-ին Կիպրոսի կառավարությունը ներկայացրել է բազմաթիվ դատական վճիռներ, որոնք վկայակոչվել էին դռնբաց նիստի ընթացքում:

9. Նախարարների կոմիտեի կողմից Քրիստոստոնոսն և Պապաքրիստոստոնոսն ընդդեմ Թուրքիայի գործի կապակցությամբ Հանձնաժողովի գեկույցի հրատարակումից հետո Նախագահը՝ իր 1995թ. հոկտեմբերի 19-ի նամակում դիմողին և Կիպրոսի կառավարությանն առաջարկել է ներկայացնել այն բոլոր մեկնաբանությունները, որ նրանք կցանկանային ներկայացնել: Նոյեմբերի 23-ին Թուրքիայի կառավարությունը ներկայացրել է պատասխան:

10. 1995թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի կառավարությունը ներկայացրել է մի հոդված, որին անդրադարձել էին դռնբաց նիստի ժամանակ:

Փաստեր

Գործի մասնավոր հանգամանքները

11. Դիմողը Կիպրոսի քաղաքացի է, որը ծնվել և մեծացել է Հյուսիսային Կիպրոսում գտնվող Կիրենիա տեղայնքում: 1972թ. նա ամուսնացել է և իր ամուսնու հետ տեղափոխվել Նիկոսիա:

12. Նա հայտարարում է, որ հանդիսանում է Հյուսիսային Կիպրոսի Կիրենիա տեղայնքի թիվ 4609, 4610, 4618, 4619, 4748, 4884, 5002, 5004, 5386 և 5390 հողակտորների սեփականատերը և պնդում, որ մինչև 1974թ. հուլիսի 20-ին Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի գրավումը, թիվ 5390 հողակտորի վրա սկսվել էին շինարարական աշխատանքներ՝ բնակարանների կառուցման նպատակով, որոնցից մեկը նախատեսվում էր իր իսկ ընտանիքի համար: Տվյալ հողակտորների նկատմամբ նրա սեփականության իրավունքը հաստատված է Կիպրոսի կադաստրի կողմից՝ ձեռքբերման պահին տրված գրանցման վկայականով:

Նա հայտարարում է, որ ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս Թուրքիայի զինված ուժերը խոչընդոտում են նրա՝ Կիրենիա վերադառնալուն և իր սեփականությունը «անարգել օգտագործելուն»:

13. 1989թ. մարտի 19-ին դիմողը մասնակցել է կանանց խմբի («Կանայք վերադառնում են տուն» շարժում) կազմակերպած երթին՝ Հյուսիսային Կիպրոսի զավթված շրջանում գտնվող Լիմբիա գյուղում, որը գտնվում է թուրքական Ակինչիլար գյուղի մոտ: Երթի նպատակն էր հայտարարել Հունաստանում Կիպրոսի փախստականների տուն վերադառնալու իրավունքների մասին:

Ղեկավարելով երթի մասնակից հիսուն կանանցից բաղկացած մի խումբ՝ նա շարժվել է սարն ի վեր՝ դեպի Կիպրոսի թուրքական գրավյալ տարածքի այն մասը, ուր գտնվում էր Սուրբ Խաչի եկեղեցին: Գնապարհին նրանք անցել են ՄԱԿ-ի պահակակետով: Երբ նրանք հասել են եկեղեցու բակ, թուրք զինվորները շրջապատել են նրանց և այլևս թույլ չեն տվել առաջ շարժվել:

14. Ի վերջո Թուրքական Կիպրոսի ոստիկանությունը ձերբակալել է նրան և շտապ օգնության մեքենայով տեղափոխել Նիկոսիա: Նա ազատ է արձակվել կեսգիշերի մոտ՝ ավելի քան տասը ժամ տևողությամբ ազատազրկումից հետո:

15. 1989թ. մայիսի 31-ի՝ Կիպրոսում ՄԱԿ-ի գործողություններին վերաբերող (1988թ. դեկտեմբերի 1-ից 1989թ. մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար) իր զեկույցում (Անվտանգության խորհրդի փաստաթուղթ S/20663) ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը 1989թ. մարտի 19-ի ցույցը նկարագրել է հետևյալ կերպ (կետ 11-ում).

«1989թ. մարտին խիստ լարվածություն առաջացավ կիպրոսցի հույն կանանց խմբի լայնորեն գովազդված ծրագրի շուրջ, որի նպատակն էր լայնածավալ ցույցի կազմակերպումը՝ Թուրքիայի զինված ուժերի հրադադարի գիծը հատելու մտադրությամբ: Այս կապակցությամբ հարկ է հիշեցնել, որ 1988թ. նոյեմբերին ՄԱԿ-ի բուֆերային գոտում տեղի ունեցած ցույցերից հետո, Կիպրոսի կառավարությունը հավաստիացրել էր, որ այսուհետև կանի այն ամենը ինչն անհրաժեշտ է բուֆերային գոտու նկատմամբ հարգանքն ապահովելու համար... Հետևաբար, ԿՄԱԶՈՒ-ն դիմել է Կառավարությանը, որպեսզի ձեռնարկվեն արդյունավետ միջոցներ՝ թույլ չտալու համար որևէ ցուցարարի մուտքը բուֆերային գոտի՝ նկատի ունենալով, որ նմանատիպ մուտքը կարող է հանգեցնել անկառավարելի իրավիճակի: Ցույցը տեղի է ունեցել 1989թ. մարտի 19-ին: Մոտավորապես 2000 կին մուտք է գործել բուֆերային գոտի՝ Լիմբիայում, իսկ ոմանք նույնիսկ կարողացել են հատել Թուրքիայի զինված ուժերի սահմանագիծը: Ավելի փոքր մի խումբ անցել է այդ սահմանն Աքինայում: Կիպրացի հույների Լիմբիա հասնելուց քիչ անց, այնտեղ են եկել նաև կիպրացի թուրք կանայք և սկսել են իրենց պատասխան ցույցը՝ չանցնելով, սակայն, սահմանը և մնալով իրենց կողմում: Անգեն թուրք զինվորները դուրս են եկել ցուցարարների դեմ և շնորհիվ նրանց ու Թուրքական Կիպրոսի ոստիկանության վարվելակերպի՝ ցույցն անցել է առանց որևէ լուրջ պատահարի: Ընդհանուր հաշվով՝ երկու մասերից ձերբակալվել է 54 ցուցարար, որոնք նույն օրը, ավելի ուշ, հանձնվել են ԿՄԱԶՈՒ-ին»:

Ա. Թուրքական զինված ուժերի ներկայությունը Հյուսիսային Կիպրոսում

16. 30000-ից ավելի անձնակազմով՝ թուրքական զինված ուժերը տեղակայված են Հյուսիսային Կիպրոսի ամբողջ զավթված տարածքով մեկ, որի բոլոր հիմնական հաղորդակցության ուղիների մոտ տեղակայված են մշտական պարետային և ստուգման կետեր: Բանակի շտաբը գտնվում է Կիրենիայում: 28-րդ հետևակային դիվիզիան տեղակայված է Աշայում (Ասիա) և ունի 14500 հոգուց կազմված անձնակազմ: Այս դիվիզիայի ստորաբաժանումները պատասխանատու են Ֆամագուստայից Նիկոսիայի Սիա Միլիա արվարձանն ընկած տարածքի համար: 39-րդ հետևակային դիվիզիան, որն ունի մոտավորապես 15500 հոգուց բաղկացած անձնակազմ՝ տեղակայված է Միրտու գյուղում և պատասխանատու է Յերուլակկոս գյուղից մինչև Լեֆկա տարածքի համար: TOURDYK-ը (Կիպրոսում Երաշխիքների մասին պայմանագրի համաձայն տեղակայված թուրքական զինված ուժերը) գտնվում է Նիկոսիայի մոտ գտնվող Օրտա Կիու գյուղում և պատասխանատու է Նիկոսիայի միջազգային օդանավակայանից մինչև Պեդիիոս գետն ընկած տարածքի համար: Թուրքիայի նավատորմի հրամանատարությունը և առաջապահ ուղեկալը գտնվում են Ֆամագուստայում և Նիկոսիայում՝ համապատասխանաբար: Թուրքիայի օդային ուժերի անձնակազմը տեղակայված

է Լեֆկոնիկոյոյում, Կրիհիում և այլ օդանավակայաններում: Թուրքական ռազմական օդանավերը տեղակայված են Թուրքիայի տարածքում՝ Ադանայում:

1. Թուրքական զինված ուժերը, ինչպես նաև ռազմական տարածքներ մուտք գործող քաղաքացիական անձինք ընդդատյա են Թուրքիայի զինվորական դատարաններին՝ համաձայն 1979թ. Արգելված ռազմական գոտիների մասին հրամանագրի (բաժին 9) և «ՀԿԹՅ» Սահմանադրության 156-րդ հոդվածի, այնքանով որքանով վերաբերում է «ՀԿԹՅ քաղաքացիներին»:

Բ. «ՀԿԹՅ» Սահմանադրության 159-րդ հոդված (1) (b)

18. «Յյուսիսային Կիպրոսի Թուրքական Յանրապետության» («ՀԿԹՅ») 1985թ. մայիսի 7-ի Սահմանադրության 159-րդ հոդվածը (1) (b) այս գործի առնչությամբ սահմանում է.

«Ամբողջ այն անշարժ գույքը, շենքերը և հաստատությունները, որոնք 1975թ. փետրվարի 13-ին, երբ հռչակվել է Կիպրոսի Թուրքական Դաշնային Պետությունը, եղել են լքված, կամ որոնք վերոնշյալ ամսաթվից հետո օրենքով համարվել են լքված կամ անտեր, կամ որոնք պետք է լինեին հասարակական հսկողության տակ կամ պատկանեին հասարակությանը, չնայած նրան, որ դրանց սեփականատերերը դեռ չէին հայտնաբերվել, ... և.... 1983թ. նոյեմբերի 15-ին գտնվում էին ՀԿԹՅ-ի տարածքում, պետք է համարվեն ՀԿԹՅ-ի սեփականությունը՝ անկախ այն փաստից, որ գրանցված չեն պետական կադաստրում (Հողամասերի գրանցման գրասենյակում), և համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն պետական կադաստրում»:

Գ. «ՀԿԹՅ»-ի հռչակմանը հաջորդած միջազգային արձագանքը

19. 1983թ. նոյեմբերի 18-ին, ի պատասխան «ՀԿԹՅ» հռչակման մասին հայտարարության, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունել է 584-րդ բանաձևը (1983թ.), որը համապատասխանաբար սահմանում է.

« Անվտանգության խորհուրդը ...

1. Դատապարտում է թուրք կիպրոսյան իշխանությունների հայտարարությունը՝ Կիպրոսի Յանրապետության մի հատվածի ենթադրվող անջատման վերաբերյալ.

2. Յանարում է Յայտարարությունն իրավական տեսանկյունից անվավեր և պահանջում է այն չեղյալ հայտարարել...

6. Կոչ է անում բոլոր պետություններին հարգել Կիպրոսի Յանրապետության ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային միասնականությունը և անօտարելիությունը:

7. Կոչ է անում բոլոր պետություններին չճանաչել որևէ կիպրոսյան պետություն, բացի Կիպրոսի Յանրապետությունից»...

20. Ի պատասխան Թուրքիայի և «ՀԿԹՅ»-ի միջև «դեսպանների» փոխանակման՝ 1984թ. մայիսի 11-ին ընդունվել է 550-րդ բանաձևը (1984), որում, inter alia, հայտարարվում էր.

« Անվտանգության խորհուրդը ...

1. Վերահաստատում է իր 541-րդ բանաձևը (1983թ.) և պահանջում դրա անհապաղ և արդյունավետ կատարումը:

2. Դատապարտում է բոլոր անջատողական գործողությունները, ներառյալ՝ Թուրքիայի և թուրք-կիպրոսյան ղեկավարության միջև դեսպանների

վիճարկվող փոխանակումը՝ հայտարարելով նրանց անօրինական և անվավեր և պահանջելով անհապաղ հետ կանչել նրանց:

3. Կրկին անգամ կոչ է անում բոլոր պետություններին չճանաչել «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն» հռչակված պետությունը, որը հիմնվել էր անջատողական գործողությունների հետևանքով, և պահանջում է, որպեսզի պետությունները չաջակցեն կամ որևէ այլ կերպ չնպաստեն վերը նշված անջատողականությանը:

4. Կոչ է անում բոլոր պետություններին հարգել Կիպրոսի Հանրապետության ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը, միասնությունը և անօտարելիությունը...:

21. 1983թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն որոշում է կայացրել առ այն, որ ինքը շարունակում է Կիպրոսի Հանրապետության կառավարությունը համարել Կիպրոսի միակ օրինական կառավարություն, և կոչ է արել հարգել Կիպրոսի Հանրապետության ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը և միասնությունը:

22. 1983թ. նոյեմբերի 16-ին Եվրոպական **հասարակայնությունը** հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ՝

«Եվրոպական համայնքի տասն անդամ պետություններ խորապես անհանգստացած են այս հայտարարության կապակցությամբ, որը հավակնում է ստեղծել «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն»՝ որպես անկախ պետություն: Նրանք մերժում են այս հայտարարությունը, որն անտեսում է ՄԱԿ-ի՝ այդ հայտարարությանն ի պատասխան ընդունված բանաձևերը: Տասը պետությունները հաստատում են իրենց անվերապահ և բացարձակ աջակցությունը Կիպրոսի Հանրապետության ինքնիշխանությանը, անկախությանը, տարածքային ամբողջականությանը և միասնությանը: Նրանք նախագահ Կուլարիանուի կառավարությունը շարունակում են համարել Կիպրոսի Հանրապետության միակ օրինական կառավարություն: Նրանք կոչ են անում բոլոր շահագրգիռ կողմերին չճանաչել այս ակտը, որը պատճառ է հանդիսանում այդ շրջանում չափազանց լուրջ իրավիճակի ստեղծման համար»:

23 Համագործակցության երկրների կառավարությունների ղեկավարները, 1983թ. նոյեմբերի 23-29-ը հանդիպելով Նյու Դելիիում՝ լրատվամիջոցների առջև հանդես են եկել հետևյալ հայտարարությամբ՝

«Կառավարությունների ղեկավարները դատապարտել են 1983թ. նոյեմբերի 15-ին թուրք-կիպրական իշխանությունների հայտարարությունը՝ Հյուսիսային Կիպրոսում, օտարերկրյա զավթման ներքո գտնվող տարածքում, անջատողական պետություն ստեղծելու մասին: Ամբողջովին հաստատելով Անվտանգության խորհրդի 541-րդ բանաձևը, նրանք հայտարարությունը համարել են անվավեր և միացել են այն չճանաչելու և չեղյալ հայտարարելու կոչին: Այնուհետև նրանք կոչ են արել բոլոր պետություններին, որպեսզի նրանք չաջակցեն կամ որևէ կերպ չնպաստեն անօրինական անջատողականությանը: Նրանք այս անօրինական գործողությունը դիտել են որպես մարտահրավեր միջազգային հանրությանը և պահանջել են Կիպրոսում ՄԱԿ-ի համապատասխան բանաձևերի կատարումը»:

Դ. Թուրքիայի 1990թ. հունվարի 22-ի հայտարարությունը՝ համաձայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի

24. 1990թ. հունվարի 22-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, համաձայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի, հանձնել է հետևյալ հայտարարությունը.

«Թուրքիայի Հանրապետության կառավարության անունից և, հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածի վրա, ես սույնով հայտարարում եմ հետևյալը.

Թուրքիայի Հանրապետության կառավարությունը, հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածի վրա, սույնով՝ առանց հատուկ համաձայնության, ipso facto ճանաչում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտադիր իրավագործությունը բոլոր այն հարցերում, որոնք առնչվում են Կոնվենցիայի մեկնաբանությանը և կիրառմանը, որը վերաբերում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով՝ իրավագործության իրականացմանը Թուրքիայի Հանրապետության պետական սահմանների տարածքում, և նկատի ունենալով, որ այդ հարցերը նախկինում քննության են առնվել Հանձնաժողովի կողմից՝ համաձայն այն իրավասությունների, որ վերջինիս վերապահել է Թուրքիան:

Այս հայտարարությունն արվել է փոխադարձության պայմանով, ներառյալ՝ Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների փոխադարձությունը: Այն վավեր է ի պահ հանձնելու պահից երեք տարվա ընթացքում և տարածվում է այն փաստերի, ներառյալ՝ նման փաստերի հիման վրա ընդունված վճիռների կապակցությամբ բարձրացված հարցերի վրա, որոնք տեղի են ունեցել սույն հայտարարությունն ի պահ հանձնելու պահից հետո»:

25. Վերոնշյալ հայտարարությունը նորոգվել է 1993թ. հունվարի 22-ին՝ ևս երեք տարի ժամկետով և հիմնականում նույն պայմաններով:

Վարույթը Հանձնաժողովում

26. Տկն Լուիզիդուն ներկայացրել է գանգատը (թիվ 15318/89) 1989թ. հուլիսի 22-ին:

Նա գանգատվել է, որ իր ձերբակալումով և կալանավորմամբ խախտվել են Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածները: Այնուհետև նա գանգատվել է, որ արգելվելով իրեն մուտք գործել իր սեփականություն հանդիսացող տարածքը, շարունակաբար խախտվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը:

27. 1991թ. մարտի 4-ին Հանձնաժողովն ընդունելի է հայտարարել դիմողի գանգատներն այն մասով, որը վերաբերում է 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների խախտմանը՝ նրա ձերբակալման և կալանավորման կապակցությամբ, ինչպես նաև 8-րդ հոդվածի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտմանը՝ կապված նրա՝ իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու իրավունքի շարունակական խախտման հետ, որը ենթադրաբար տեղի էր ունեցել 1987թ. հունվարի 29-ից հետո: Ինչ վերաբերում է վերջին երկու դրույթների հիման վրա ներկայացված նրա այն գանգատներին, որոնք վերաբերում էին իր սեփականությունը հանդիսացող տարածք մուտք գործելու իրավունքի շարունակական ոտնահարմանը մինչև 1987թ. հունվարի 29-ը, ապա դրանք հայտարարվել են անընդունելի:

Իր՝ 1993թ. հուլիսի 8-ի զեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի չի ունեցել 3-րդ հոդվածի (միաձայն), 8-րդ հոդվածի՝ կապված դիմողի անձնական կյանքի հետ (տասնմեկ ձայնով՝ ընդդեմ երկուսի), 5-րդ հոդվածի 1-ին կետի (ինը ձայնով ընդդեմ չորսի), 8-րդ հոդվածի՝ կապված դիմողի

տան հետ (ինը ձայնով՝ ընդդեմ չորսի) և թիվ 1 արձանագրության 1-ին կետի (ութ ձայնով՝ ընդդեմ հինգի) խախտում: Հանձնաժողովի կարծիքի ամբողջական տեքստը, ինչպես նաև զեկույցում տեղ գտած երեք առանձին կարծիքները՝ որպես հավելում, կցվել են Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի 1995թ. մարտի 23-ի վճռին (նախնական առարկություններ), Շարքեր A, թիվ 310:

ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Իր հուշագրում դիմողը խնդրել է, որպեսզի Դատարանը որոշում կայացնի և հայտարարի, որ.

1. Պատասխանող կառավարությունը պատասխանատու է թիվ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտման համար,

2. Պատասխանող կառավարությունը պատասխանատու է 8-րդ հոդվածի շարունակական խախտման համար,

3. Պատասխանող կառավարությունը պարտավոր է համաձայն Կոնվենցիայի 50-րդ հոդվածի՝ տրամադրել արդարացի բավարարում և

4. Պատասխանող կառավարությունը պարտավոր է թույլ տալ իրեն ազատորեն օգտվելու իր իրավունքներից՝ ելնելով այն որոշումներից, որ կկայացվեն Կոնվենցիայի և Արձանագրության խախտումների վերաբերյալ:

29. Կիպրոսի կառավարությունը հայտարարել է, որ.

1. Դատարանը *ratione temporis* իրավագոր է քննելու դիմողի գործը, քանի որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի հիման վրա ներկայացված Թուրքիայի հայտարարությունն ակնհայտորեն չի բացառել իրավագորությունը՝ կապված Թուրքիայի 1990թ. հունվարի 22-ի հայտարարությունից հետո Հանձնաժողովի քննության առած խախտումների հետ: Այսպիսով, Թուրքիան պատասխանատու է 1987թ. հունվարի 27-ից հետո տեղի ունեցած այն խախտումների համար, որոնց վերաբերյալ գանգատվում է դիմողը:

2. Բոլոր դեպքերում Թուրքիան պատասխանատու է այն խախտումների համար, որոնք շարունակվել են 1990թ. հունվարի 22-ից հետո, և որոնք քննվել են Հանձնաժողովի կողմից:

3. Կա մշտապես գոյություն ունեցող իրավիճակ, որը դեռ պահպանվում է թուրքական գրավյալ տարածքներում, որը խախտում է դիմողի իրավունքները՝ համաձայն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի:

30. Իր հուշագրում Թուրքիայի կառավարությունը հանդես է եկել հետևյալ հիմնավորմամբ.

1. դիմողն անվերադարձ զրկվել է Հյուսիսային Կիպրոսում գտնվող իր սեփականությունից ամենաուշը 1985թ. մայիսի 7-ին՝ «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» կառավարության ընդունած ակտով,

2. վերոհիշյալ 1-ին կետում նշված ակտը չի նշանակում Թուրքիայի «իրավագորության» ակտ՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով,

3. Թուրքիան չի խախտել դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված իրավունքները:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

31. Դիմողը և Կիպրոսի կառավարությունը պնդում են, որ Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի գավթունից ի վեր դիմողը զրկվել է իր սեփականությունը հանդիսացող տարածք մուտք գործելու և դրա նկատմամբ վերահսկողության

հնարավորությունից: Ըստ նրանց՝ այս ամենը հանդիսացել է, ի խախտումն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, շարունակական և անարդարացի միջամտություն սեփական գույքի անարգել օգտագործման իրավունքին, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված սեփական տան նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում:

Թուրքիայի կառավարությունը վիճարկել է այս հայտարարությունը՝ պնդելով, որ նախ և առաջ Դատարանը *ratione temporis* իրավագոր չէ քննելու այն:

I. Կառավարության նախնական առարկությունները

32. Դատարանը հիշեցնում է այս գործի նախնական առարկությունների վերաբերյալ վճռում իր եզրահանգումներն այն մասին, որ համաձայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի՝ պայմանագրի մասնակից պետությունները կարող են Դատարանի իրավագրության իրենց ճանաչումը սահմանափակել այն հարցերի կապակցությամբ, որոնք տեղի են ունեցել մինչև հայտարարությունների ի պահ հանձնումը, ինչը և արեց Թուրքիան իր 1990թ. հունվարի 22-ի հայտարարության մեջ: Սրանից հետևում է, որ Դատարանի իրավագրությունը տարածվում է սեփականության իրավունքի շարունակական խախտման վերաբերյալ դիմողի փաստարկի վրա միայն 1990թ. հունվարի 22-ից հետո: Այսպիսով, Դատարանն այժմ պետք է քննության առնի այդ փաստարկը, քանի որ վերոհիշյալ վճռում Դատարանը որոշել է *ratione temporis* առարկությունից բխող հարցերը միացնել գործի ըստ էության քննությանը (տե՛ս Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի 1995թ. մարտի 23-ի վճիռը, (նախնական առարկություններ), Շարքեր A, թիվ 310, էջ 33-34, կետ 102-02):

Ա. 46-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի հայտարարության բովանդակությունը

33. Գործի հանգամանքների վերաբերյալ իր հուշագրում Կիպրոսի կառավարությունը պնդել է, որ 46-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի հայտարարության շարադրումը երկիմաստ էր և անորոշ: Վերջին նախադասության մեջ «փաստեր» բառից հետո ստորակետի բացակայությունը, որտեղ այս բառը հայտնվում է երկրորդ անգամ, անհասկանալի է դարձնում, թե արդյոք «որոնք տեղի են ունեցել ի պահ հանձնելու ամսաթվից հետո» արտահայտությունը վերաբերում է «փաստերին» (առաջին անգամ օգտագործվելիս), թե «վճիռներին» (տե՛ս վերը՝ կետ 24): Նմանատիպ դիտարկումներ են արվել նաև Կառավարության՝ 25-րդ հոդվածի հիման վրա արված հայտարարությունների կապակցությամբ: Համաձայն իրենց պնդման՝ բոլոր այն մարմինները, որոնք պատասխանատու են Կոնվենցիայի կատարման համար և օժտված են որոշակի իրավագրությամբ, իրականացնում են իրենց իրավագրությունը Կոնվենցիայի վավերացման ժամանակի նկատմամբ հետադարձ ուժով, եթե չի արվում միանշանակ և որոշակի ձևակերպումներով *ratione temporis* սահմանափակում: Սակայն նրանք պնդում են, որ այս վերջին պահանջը չի բավարարվել տվյալ գործում:

34. Դատարանը գտնում է, որ այս առարկությունն իմաստազուրկ է: Նրա կարծիքով՝ այդ տեքստը Կիպրոսի կառավարության առաջարկած տարբերակով կարողալու դեպքում հայտարարության վերջին նախադասությունը կդառնա անըմբռնելի: Դատարանը գտնում է, որ Թուրքիայի կառավարության մտադրությունը՝ Դատարանի իրավագրությունից բացառելու 46-րդ հոդվածի հիման վրա կատարված հայտարարության ի պահ հանձնումից առաջ տեղի ունեցած փաստերը, ակնհայտ է վերջին նախադասության շարադրումից և ողջամտորեն բխում է դրանից: Ավելին, Դատարանը նշում է, որ Հանձնաժողովը նույն ձևով մեկնաբանել է նմանօրինակ բառերով և կետադրությամբ՝ Թուրքիայի

կառավարության՝ 25-րդ հոդվածի համաձայն կատարված հայտարարությունները (տե՛ս թիվ 15299/89, 15300/89 և 15318/89 գանգատների ընդունելիության մասին որոշումը, Քրիստոստոմոսը, Պապաքրիստոստոմոսն և Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի, 1991թ. մարտի 4, Որոշումներ և վճիռներ (DR) 68, էջ 250-251, կետեր 50-60):

Բ. Դատարանին ներկայացրած հետագա փաստարկները

35. Իր կողմից, Թուրքիայի կառավարությունը պնդում է, որ Յուսիսային Կիպրոսում սեփականությունը «վերցնելու» գործընթացն սկսվել է 1974թ. և վերաճել է անվերադարձ բռնագրավման՝ 1985թ. մայիսի 7-ի «ՅԿԹՅ» Սահմանադրության 159-րդ հոդվածի (1) (b) ուժով, որը համաձայն միջազգային իրավունքի անհրաժեշտության դոկտրինայի հիմնավորված է: Այս համատեքստում նա հայտարարել է, որ «ՅԿԹՅ»-ն ժողովրդավարական և սահմանադրական պետություն է, որի Սահմանադրությունն ընդունվել է հանրաքվեով: Քաղաքական և վարչական զարգացման արդյունքում «ՅԿԹՅ»-ն հիմնադրվել է կիպրոսցի թուրք ժողովրդի կողմից՝ համաձայն ինքնորոշման իրավունքի, և այդ իսկ պատճառով կարողացել է ստեղծել վավերական օրենք: Բացի դրանից Կիպրոսի հյուսիսային շրջանի վարչակարգի վավերականությունը և ինքնիշխանությունը ճանաչվել են Միացյալ Թագավորության տարբեր դատական վճիռներում (Hesperides Hotels Ltd and Another v. Aegean Turkish Holidays Ltd. And Another [1977] 3 Weekly Law Reports 656 (Court of Appeal) and Poly Peck International PLC v. Asil Nadir and Others [1992] 2 All England Reports 238 (Court of Appeal)):

Բացի դրանից գտնելով, որ Քրիստոստոմոսն և Պապաքրիստոստոմոսն ընդդեմ Թուրքիայի գործում դիմողների ձերբակալումը և կալանավորումը օրինական էին՝ Յաննանաժողովը և, հետևաբար, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել են «ՅԿԹՅ» համապատասխան օրենքների վավերականությունը (տե՛ս 1993թ. հուլիսի 8-ի Յաննանաժողովի զեկույցը, կետ 143-70 և 1995թ. հոկտեմբերի 19-ի 245 DH(95) բանաձևը):

Թուրքիայի կառավարության կարծիքով՝ այսպիսով դիմողը հաստատապես կորցրել է իր սեփականության իրավունքը շատ ավելի վաղ, քան վճռորոշ 1990թ. հունվարի 22-ը, այն է՝ ամենաուշը 1985թ. մայիսի 7-ին: **Պապամիկալոպուլուսը և այլոք ընդդեմ Յունաստանի գործով** Դատարանի վճիռը (1993թ. հունիսի 24, Շարքեր A, թիվ 2620-B), որում Դատարանը որոշել է, որ դիմողի՝ որպես սեփականատիրոջ, իրավունքները ոտնահարվել են, տարբերվում է այս գործից նրանով, որ Յունաստանի կառավարությունն այդ գործում չի ներկայացրել որևէ *ratione temporis* առարկություն:

Յետևաբար, նրա կարծիքով, տվյալ գործում Դատարանը գործ ուներ միաժամանակյա գործողության հետ, որը տեղի էր ունեցել մինչև Կառավարության կողմից Դատարանի իրավագործության ընդունումը՝ համաձայն 46-րդ հոդվածի: Այսպիսով, Դատարանը *ratione temporis* իրավասու չէր քննության առնելու դիմողի գանգատները:

36. Դիմողը, որի հայտարարությունները հաստատում էր Կիպրոսի կառավարությունը, պնդել է, որ դեռևս 1974թ. նրան զրկել էին իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու և, հետևաբար՝ սեփականության վերահսկման հնարավորությունից, ինչը հանդիսանում է իր իրավունքների շարունակական ոտնահարում, և որ ինչպես Կոնվենցիայի հաստատությունների, այնպես էլ այլ միջազգային դատարանների **իրավագիտությունն** ընդունել է այս գաղափարը: Նա ընդգծել է, որ Կոնվենցիան մեկնաբանելիս պետք է հաշվի առնվեն միջազգային իրավունքի

նորմերը և պնդել է, որ 1985թ. «ՀԿԹՀ» Սահմանադրությունը, ինչպես ճանաչվել է միջազգային հանրության կողմից, անվավեր է ըստ միջազգային իրավունքի, քանի որ դրա հիմքում ընկած էր թուրքիայի կողմից ուժի անօրինական կիրառումը: Երկրորդ պատճառն այն էր, որ թուրքական իշխանությունների քաղաքականության հիմքում ընկած էր ռասայական խտրականությունը, որը հանդիսանում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի և միջազգային սովորության իրավունքի խախտում: Այսպիսով, 1985թ. Սահմանադրության բռնագրավման վերաբերյալ դրույթներին չպետք է տրվի իրավական ուժ:

37. Համաձայն Կիպրոսի կառավարության բացատրությունների՝ կիպրացի հույներին գրավյալ տարածքում իրենց սեփականությունից անարգել օգտվելու իրավունքից զրկելու գործընթացն ուներ համակարգված և շարունակական բնույթ: Սակայն նա հերքում է, որ այս գործընթացը հանդիսացել է սեփականության կորուստ: Այս պնդումն իր հաստատումն է գտնում 1995թ. օգոստոսի 28-ի Համարժեք հողերի բնակեցման ու բաշխման մասին օրենքում, որը ենթադրում էր լայնացնել հունական սեփականության բռնագրավման մինչ այդ թույլատրելի սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև 1987թ. Նախարարների Կոմիտեում շրջանառության մեջ գտնվող թուրքիայի այն հուշագրում, որում մասնավորապես պնդվում է, որ Հյուսիսային Կիպրոսում հունական սեփականությունը չի բռնագրավվել:

38. Ինչպես նախնական առարկությունների վերաբերյալ միստի ժամանակ բացատրել է Հանձնաժողովի պատվիրակը, Հանձնաժողովը նաև գտել է, որ դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա ներկայացրած գանգատները վերաբերում էին այնպիսի խախտումների, որոնք հիմնականում ունեին շարունակական բնույթ: Նախնական առարկությունների վերաբերյալ իր գրավոր բացատրություններում պատվիրակն արտահայտել է այն կարծիքը, որ Դատարանը իրավասու է քննության առնելու այս գանգատները՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են 1990թ. հունվարի 22-ից հետո ընկած ժամանակահատվածին: Ավելին, գործի հանգամանքների ըստ էության քննության ժամանակ պատվիրակը, դիմողի հաստատմամբ, խնդրել է Դատարանին որոշել, թե արդյոք թուրքիային չպետք է թույլ տրվի ներկայացնել 1985թ. Սահմանադրության դրույթներին վերաբերող նոր փաստեր, որոնք չեն ներկայացվել Հանձնաժողովում վարույթի ընթացքում:

Գ. Դատարանի գնահատականը

39. Ինչ վերաբերում է նոր փաստերի ներկայացումը չթույլատրելուն, Դատարանը նշում է, որ սկզբունքայնորեն իրավունք ունի գանգատի ըստ էության քննության ժամանակ քննության առնելու նոր փաստեր՝ պարզաբանելով և ճշգրտելով Հանձնաժողովի կողմից արդեն իսկ հաստատված փաստերը, եթե դրանք համարում է գործի հետ առնչություն ունեցող (տե՛ս Մաք Մայքլը ընդդեմ Միացյալ Թագավորության 1995թ. փետրվարի 24-ի վճիռը, Շարքեր A. թիվ 307-B, էջ 51, կետ 73, և Գուստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի 1996թ. ապրիլի 25-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1996-II, էջ 655, կետ 51):

40. Չնայած այն հանգամանքին, որ թուրքիայի կառավարությունը տվյալ գործի առնչությամբ Հանձնաժողովում վարույթի ընթացքում բարձրացրել էր *ratione temporis* առարկությունը, Հանձնաժողովի 1991թ. մարտի 4-ի՝ ընդունելիության վերաբերյալ որոշման մեջ տեղ չէր գտել որևէ քննարկում կամ վերլուծություն առ այն, թե արդյոք վիճարկվող հարցերը ներառում էին շարունակական, թե միաժամանակյա իրավիճակ: Այս հարցը, թեև որոշ չափով շոշափվել էր Դատարանում նախնական առարկությունների քննության փուլում, միայն ըստ էության քննության փուլում են մանրամասն քննարկման ենթակա նոր

տեղեկություններ ներկայացվել ոչ միայն Թուրքիայի կառավարության գրավոր բացատրություններում, այլև Կիպրոսի կառավարության գրավոր բացատրությունների հավելվածում: Այս հիմքերով չթույլատրելու խնդրանքը պետք է մերժվի:

41. Դատարանը հիշեցնում է, որ ճանաչել է Կոնվենցիայի շարունակական խախտման հասկացությունը և դրա հետևանքները՝ կապված Կոնվենցիայի մարմինների իրավասության ժամկետային սահմանափակման հետ (տե՛ս, *inter alia*, Պապանիկալոպուլուսը և այլոք ընդդեմ Յունաստանի 1993թ. հունիսի 24-ի վճիռը, Շարքեր A, թիվ 260-B, կետ 40 և 46, և Ազրոտեքսիմը և այլոք ընդդեմ Յունաստանի 1995թ. հոկտեմբերի 24-ի վճիռը, Շարքեր A, թիվ 330-A, էջ 22, կետ 58):

Չեռևաբար, տվյալ գործը վերաբերում է շարունակական բնույթ ունեցող վիճարկվող խախտման, ինչը դեռևս ենթակա է Դատարանի քննությանը, եթե դիմողը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի 8-րդ հոդվածի նպատակներից ելնելով, կարող է շարունակել համարվել, հողի օրինական սեփականատերը:

42. Դատարանը հաշվի է առել Թուրքիայի կառավարության այն պնդումը, որ «Յյուսիսային Կիպրոսում սեփականությունը «վերցնելու» գործընթացն սկսվել է 1974թ. և վերաճել է անվերադարձ բռնագրավման՝ 1985թ. մայիսի 7-ի «ՅԿԹՅ» Սահմանադրության 159-րդ հոդվածի ուժով» (տե՛ս վերը՝ կետ 35): Այս պնդման ձևակերպումից կարելի է ենթադրել, որ Թուրքիայի կառավարության տեսանկյունից դիմողը դեռ չէր կորցրել հողի նկատմամբ իր սեփականության իրավունքը, մինչև 1985թ. մայիսի 7-ը. եթե այդ պնդումն ընկալվի այլ կերպ, նշանակում է՝ Թուրքիայի կառավարությունը չի կարողացել պարզաբանել, թե այդ դեպքում ինչպես է տեղի ունեցել սեփականության կորուստը մինչև նշված թվականը: Այդ իսկ պատճառով Դատարանը կանդորադառնա Կառավարության այն պնդման վրա, համաձայն որի՝ սեփականության իրավունքը դադարել է 1985թ. «ՅԿԹՅ» Սահմանադրության 159-րդ հոդվածի կիրառման արդյունքում (տե՛ս վերը՝ կետ 18):

Այս համատեքստում Դատարանը վկայակոչում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 541-րդ բանաձևը (1983), որում «ՅԿԹՅ»-ի ստեղծման հռչակումը հայտարարվում էր իրավական տեսանկյունից անվավեր, և կոչ էր արվում բոլոր պետություններին չճանաչել Կիպրոսի որևէ այլ պետություն, բացի Կիպրոսի Յանրապետությունից: Նմանատիպ կոչ կրկնվում էր Անվտանգության խորհրդի 550-րդ բանաձևում (ընդունված 1984թ. մայիսի 11-ին): 1983թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն նույնպես դատապարտել է պետականության հռչակումը և կոչ է արել բոլոր պետություններին մերժել «ՅԿԹՅ»-ի ճանաչումը (տե՛ս վերը՝ կետ 22-23): Բացի դրանից՝ Կիպրոսի կառավարությունն է միայն, որ միջազգայնորեն ճանաչվում է որպես Կիպրոսի Յանրապետության կառավարություն՝ դիվանագիտական և պայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համատեքստում (տե՛ս թիվ 6780/74 և 6950/75 Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի 1975թ. մայիսի 26, DR2, էջ 135-36 և թիվ 8007/77 Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի, 1978թ. հուլիսի 10, DR 13, էջ 146, Փանգաստերի ընդունելիության մասին Յանձնաժողովի որոշումները):

43. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի համաձայն 1969թ. մայիսի 23-ի Վիեննայի պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայով սահմանված մեկնաբանման վերաբերյալ նորմերի, և որ այդ պայմանագրի 31-րդ հոդվածի 3-րդ (գ) կետում ասվում է, որ հաշվի պետք է առնվի « կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառելի միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան դրույթ» (տե՛ս, *inter alia*, Գոլդբերն ընդդեմ Սիացյալ

Թագավորության 1975թ. փետրվարի 21-ի վճիռը, Շարքեր A, թիվ 18, էջ 14, կետ 29, Ջոստոնը և այլոք ընդդեմ Իռլանդիայի 1986թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Շարքեր A, թիվ 112, էջ 24, կետ 51 և վերը նշված Լուիզիդուի վճիռը (նախնական առարկություններ), էջ 27, կետ 73):

Դատարանի կարծիքով, Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները չեն կարող մեկնաբանվել վակուումում: Ելնելով կոնվենցիայի առանձնահատուկ բնույթից՝ որը կայանում է դրա՝ մարդու իրավունքների մասին պայմանագիր լինելուն, Դատարանը, Կոնվենցիայի 49-րդ հոդվածի համաձայն՝ իր իրավագործությանը վերաբերող վեճերի կապակցությամբ որոշում կայացնելիս, պետք է նաև հաշվի առնի միջազգային իրավունքի բոլոր համապատասխան նորմերը:

44. Այս առումով, ինչպես միջազգային պրակտիկայից, այնպես էլ վերոնշյալ տարբեր, խստորեն շարադրված բանաձևերից (տե՛ս կետ 42) ակնհայտ է, որ միջազգային հանրությունը չի ճանաչում «ՅԿԹՅ»-ն որպես պետություն՝ միջազգային իրավունքի համաձայն: Բացի դրանից, Կիպրոսի Յանրապետությունը հանդիսանում է Կիպրոսի միակ լեգիտիմ Կառավարությունը, որն իր հերթին պարտավորված է հարգելու միջազգային չափորոշիչները մարդու և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում: Այս հիմքերով Դատարանը, Կոնվենցիայի նպատակների համար, չի կարող իրավական վավերություն վերապահել այնպիսի դրույթի, ինչպիսին է Յիմնական օրենքի 159-րդ հոդվածը, որը վկայակոչվում է Թուրքիայի կողմից:

45. Դատարանը սահմանափակվում է վերոնշյալ հետևությանը և չի ցանկանում, ոչ էլ անհրաժեշտ է գտնում, զարգացնելու ընդհանուր տեսություն՝ «ՅԿԹՅ»-ի օրենսդրական կամ վարչական ակտերի օրինականության վերաբերյալ: Սակայն նա նշում է, որ միջազգային իրավունքը նմանատիպ իրավիճակում ճանաչում է որոշակի իրավական համաձայնությունների օրինականությունը, ինչպիսիք են, օրինակ, ծննդյան, մահվան կամ ամուսնության գրանցումները, «որոնց ազդեցությունները կարող են անտեսվել միայն ի վնաս այդ տարածքի բնակիչների» (տե՛ս, այս համատեքստում, Անվտանգության խորհրդի 276-րդ (1970) բանաձևին հակառակ՝ Նամբիայում Յարավային Աֆրիկայի շարունակական ներկայության իրավական հետևանքների մասին խորհրդատվական կարծիքը, [1971] Միջազգային արդարադատության դատարանի զեկույցներ 16, էջ 56, կետ125):

46. Յետևաբար, չի կարող համարվել, որ դիմողը կորցրել է իր սեփականությունը՝ «ՅԿԹՅ»-ի Սահմանադրության 159-րդ հոդվածի հիման վրա: Դիմողի սեփականության կորստին վերաբերող որևէ այլ փաստ, որը չի ներկայացվել Թուրքիայի կառավարության կողմից, նաև չի բացահայտվել Դատարանի կողմից: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ Կիպրոսի Յանրապետության օրինական կառավարությունը հետևողականորեն պաշտպանել է իր դիրքորոշումն առ այն, որ Յյուսիսային Կիպրոսում անշարժ գույքի կիպրացի հույն սեփականատերերը, ինչպիսին դիմողն է, պահպանել են իրենց սեփականության իրավունքը և պետք է հնարավորություն ստանան ազատորեն օգտագործելու իրենց ունեցվածքը: Դիմողն ակնհայտորեն ունի նույն դիրքորոշումը:

47. Յետևաբար, ելնելով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի 8-րդ հոդվածի նպատակներից՝ դիմողը պետք է շարունակի համարվել հողի օրինական սեփականատերը: Այսպիսով, *ratione temporis* առարկությունը մերժվում է:

II. Թիվ1 արձանագրության 1-ին հոդվածի վիճարկվող խախտումը

48. Դիմողը հայտարարել է, որ Յյուսիսային Կիպրոսում գտնվող իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու շարունակական մերժումը և դրանից բխող՝ այդ սեփականության նկատմամբ վերահսկողության կորուստը հանդիսանում են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, որի համար պատասխանատու է Թուրքիայի կառավարությունը: Հոդվածում մասնավորապես ասվում է.

« Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք անհրաժեշտ է համարում, իր հիմնական շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Պատասխանատվության հարցը

Դիմողը պնդում է, որ համաձայն *ratione materiae* նախնական առարկությունների հետ կապված իր փաստարկների (Լուիզիդուի վճիռը (նախնական առարկություններ), վերը մեջբերված կետ 32, էջ 22-23, կետեր 57-58), տվյալ գործը բացառիկ բնույթի է, քանի որ այն իշխանությունները, որոնք ենթադրաբար միջամտել են գույքն անարգել օգտագործելու իրավունքին, չեն հանդիսանում այն տարածքի միակ օրինական կառավարությունը, որտեղ գտնվում է սեփականությունը: Այս առանձնահատկությունը հանգեցնում է նրան, որ որոշելու համար, թե արդյոք Թուրքիան պատասխանատու է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված Յյուսիսային Կիպրոսում գտնվող իր ունեցվածքի հետ կապված իր իրավունքների վիճարկվող խախտման համար, Դատարանը պետք է հաշվի առնի պետության պատասխանատվության սկզբունքներն ըստ միջազգային իրավունքի: Այս համատեքստում տկն Լուիզիդուն կրկնել է Հանձնաժողովին ուղղված իր քննադատությունն առ այն, որ Հանձնաժողովը չափից ավելի շատ է կենտրոնացել մուտքի շարունակական մերժմանը թուրք պաշտոնյաների ուղղակի ներգրավված լինելու հարցի վրա: Մինչ Կոնվենցիայի խախտումներին թուրք պաշտոնյաների ուղղակի ներգրավվածությունը ապացույցն առնչվում է գույքին, այնուամենայնիվ այն չի հանդիսանում պատասխանատվության բավարար իրավական պայման՝ ըստ միջազգային հանրային իրավունքի:

Նա պնդել է, որ պետության պատասխանատվության գաղափարը հիմնվում է հաշվետու լինելու իրատեսական գաղափարի վրա: Պետությունը պատասխանատու է այն բոլոր իրադարձությունների համար, որոնք տեղի են ունենում այն տարածքում, որի համար տվյալ պետությունը միջազգայնորեն պատասխանատու է, նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ իրադարձությունը դուրս է իր փաստացի վերահսկման

շրջանակներից: Այսպիսով, նույնիսկ ultra vires պաշտոնյաների գործողությունները

կարող են հանգեցնել պետության պատասխանատվության:

Դիմողի կարծիքով, միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունը, որը պատասխանատու է ճանաչվում որոշակի տարածքի համար, շարունակում է կրել այդ պատասխանատվությունը նույնիսկ այն դեպքում, երբ այդ տարածքում գործում է տեղական կառավարումը: Իրավական դիրքորոշման հարց է, թե արդյո՞ք այդ տեղական կառավարումն անօրինական է՝ հաշվի առնելով, որ դա արդյունք է ուժի անօրինական օգտագործման, թե արդյոք օրինական է՝ լինելով պաշտպանված պետության կողմից կամ գտնվելով որևէ այլ կախվածության մեջ: Պետությունը չի կարող խուսափել միջազգային իրավունքով սահմանված իր պարտավորությունների խախտման համար պատասխանատվությունից, առավել ևս, երբ դա վերաբերում է Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների խախտմանը, որը, ինչպես արտացոլված է Կոնվենցիայի 1-ին հոդվածում՝ ներառում է Կոնվենցիայի իրավունքների ապահովման երաշխիք:

Տկն Լուիզիդուն հայտարարել է, որ «ՅԿԹՅ»-ի ստեղծումն իրավական առումով անվավեր է, և ոչ մի պետություն, բացի Թուրքիայից, կամ միջազգային կազմակերպություն չի ճանաչել դրա գոյությունը: Քանի որ ակներև է, որ Կիպրոսի Յանրապետությունը չի կարող պատասխանատու լինել կղզու այն հատվածի համար, որը գրավված է Թուրքիայի կողմից, պատասխանատվությունը պետք է կրի Թուրքիան: Այլապես Կիպրոսի հյուսիսային շրջանը կհանդիսանա վակուում՝ մարդու իրավունքների խախտման համար պատասխանատվության առնչությամբ, ինչի ընդունումը կհակասի Կոնվենցիայի հիմքում ընկած արդյունավետության սկզբունքին: Բոլոր դեպքերում, գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ Թուրքիան ուներ արդյունավետ և լիակատար վերահսկողություն գրավյալ տարածքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների վրա: Նա հավելել է, որ այն փաստը, որ Դատարանը տվյալ գործի նախնական առարկությունների փուլում գտել է, որ Թուրքիան ունի իրավագործություն, ստեղծել է հիմնավոր կանխավարկած առ այն, որ Թուրքիան պատասխանատու է այն բոլոր գործողությունների համար, որ տեղի են ունենում ընկալյալ տարածքում:

50. Ըստ Կիպրոսի կառավարության՝ Թուրքիան ունի արդյունավետ ռազմական և քաղաքական վերահսկողություն Յյուսիսային Կիպրոսի վրա: Նա չի կարող խուսափել միջազգային իրավունքով սահմանված իր պարտականություններից՝ ձևացնելով, որ Յյուսիսային Կիպրոսի ղեկավարումը հանձնել է «մարիոնետների» անօրինական վարչակարգին:

51. Թուրքիայի կառավարությունը հերքել է, որ ունի իրավագործություն Յյուսիսային Կիպրոսում՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով: Առաջին հերթին, նա հիշեցրել է Յանձնաժողովի ավելի վաղ նախադեպային իրավունքը, որով նա Թուրքիայի իրավագործությունը սահմանափակել է «սահմանային գոտով, այլ ոչ թե Յյուսիսային Կիպրոսի ամբողջ տարածքով, որը գտնվում է կիպրոսյան թուրքական իշխանությունների վերահսկման տակ (տե՛ս թիվ 6780/74, 6950/75 և 8007/77 գանգատների ընդունելիության վերաբերյալ Յանձնաժողովի որոշումները՝ մեջբերված վերը՝ կետ 42-ում): Երկրորդը՝ դիմողների կողմից վիճարկվող վերահսկողության և պատասխանատվության կանխավարկածը հերքված էր: Այս կապակցությամբ չափազանց կարևոր էր այն փաստը, որ Յանձնաժողովը՝ Քրիստոստոմոսը և Պապաքրիստոմոսն ընդդեմ Թուրքիայի գործով 1993թ. հուլիսի 8-ի զեկուլյցում գտնում էր, որ Յյուսիսային Կիպրոսում դիմողների ձեռքակալումը, կալանավորումը և դատավարությունն այն «գործողությունները» չեն, որոնց համար պատասխանատու է Թուրքիան: Բացի դրանից, Յանձնաժողովը

չէր գտել որևէ ապացույց առ այն, որ դիմողների գործում Թուրքիայի իշխանությունները վերահսկողություն են իրականացրել բանտային համակարգի կիպրոսյան թուրք ղեկավարության կամ արդարադատությունն իրականացնող կիպրոսյան թուրք մարմինների նկատմամբ (մեջբերված է վերը՝ կետ 32-ում):

Ի հավելումն՝ Թուրքիայի կառավարությունը պնդել է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածում տեղ գտած իրավազորության հարցը և միջազգային իրավունքի հիման վրա պետության պատասխանատվության հարցը նույնական չեն: 1-ին հոդվածի ձևակերպումը չի նախատեսում պետության պատասխանատվությունը: Նրա կարծիքով, այս դրույթը պահանջում է ապացույց առ այն, որ վիճարկվող գործողությունը փաստորեն իրականացվել է Պատասխանող պետության իշխանությունների կողմից կամ տեղի է ունեցել վերջինիս ուղղակի վերահսկողությամբ, և որ վիճարկվող խախտման ժամանակ այդ իշխանությունն ունեցել է արդյունավետ իրավազորություն դիմողի նկատմամբ:

Բացի վերը նշվածից, Թուրքիայի կառավարությունը պնդում է, որ այս տեսանկյունից Թուրքիան այդ գործում չի իրականացրել արդյունավետ վերահսկողություն կամ իրավազորություն դիմողի նկատմամբ, քանի որ 1990թ. հունվարի 22-ի վճռական օրը «ՅԿԹՅ»-ի շրջանակներում սահմանադրորեն կազմավորված կիպրոսյան թուրք համայնքի իշխանությունները Թուրքիայի անունից որևէ իրավազորություն չեն իրականացրել և չեն վերահսկել դիմողի սեփականության իրավունքները:

Այս կապակցությամբ, Թուրքիայի կառավարությունը նորից ընդգծել է, որ «ՅԿԹՅ»-ն ժողովրդավարական և սահմանադրական պետություն է, որը չունի քաղաքական կախվածություն որևէ ինքնիշխան պետությունից՝ ներառյալ Թուրքիան: Յյուսիսային Կիպրոսի վարչակարգը ձևավորվել է կիպրացի-թուրք ժողովրդի կողմից, որն իրականացրել է իր ինքնորոշման իրավունքը, և ոչ թե Թուրքիայի կողմից: Ավելին, Թուրքիայի զինված ուժերի ներկայությունը Յյուսիսային Կիպրոսում պայմանավորված է կիպրացի-թուրք ժողովրդի պաշտպանության նպատակով, և «ՅԿԹՅ»-ի ղեկավարող մարմինների համաձայնությամբ: Ոչ Թուրքիայի զինված ուժերը, ոչ էլ Թուրքիայի կառավարությունը Յյուսիսային Կիպրոսում չեն իրականացրել իշխանություն: Բացի դրանից, «ՅԿԹՅ»-ի անկախությունը գնահատելիս՝ պետք է հաշվի առնվի այն, որ Յյուսիսային Կիպրոսում կան քաղաքական կուսակցություններ, ինչպես նաև գործում է ժողովրդավարական ընտրությունների համակարգ, և որ Սահմանադրության նախագիծը նախապատրաստվել է սահմանադիր ժողովի կողմից և ընդունվել հանրաքվեի միջոցով:

52. Ինչ վերաբերում է պատասխանատվության հարցին, ապա Դատարանը առաջին հերթին հիշեցնում է, որ վերոնշյալ Լուիզիդուի վճռում (նախնական առարկություններ) (էջ 23-24, կետ 62) ինքն ընդգծել է, որ համաձայն իր կողմից հաստատված նախադեպային իրավունքի՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածում սահմանված «իրավազորության» գաղափարը չի տարածվում զուտ պայմանավորվող պետությունների պետական տարածքի վրա: Հետևաբար, պայմանավորվող պետությունների պատասխանատվությունը կարող է ներառել նրանց իշխանությունների գործողությունները կամ անգործությունը, որի ազդեցությունը տարածվում է իր պետության սահմաններից դուրս: Այս գործի առնչությամբ Դատարանը մասնավորապես կարևորել է այն, որ համաձայն պետությունների պատասխանատվությանը վերաբերող միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքների՝ պայմանավորվող պետության պատասխանատվության հարցը կարող է ծագել նաև այն դեպքում, երբ օրինական կամ անօրինական ռազմական գործողությունների հետևանքով այն իրականացնում է արդյունավետ վերահսկողություն իր պետության սահմաններից դուրս գտնվող տարածքի վրա: Այսպիսի տարածքում

Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման պարտականությունը բխում է նման վերահսկողությունից՝ անկախ նրանից, այն իրականացվում է ուղղակիորեն՝ զինված ուժերի կողմից, թե ենթակա տեղական իշխանության միջոցով (տե՛ս վերոնշյալ Լուիզիդուի վճիռը (նախնական առարկություններ) ibid):

53. Երկրորդը՝ Դատարանը ընդգծում է, որ կկենտրոնանա այս գործում բարձրացված հարցերի վրա՝ առանց ընդհանուր համատեքստն անտեսելու:

54. Դատարանի կողմից՝ պատասխանատվության հարցի գնահատման համար կարևոր է, որ թուրքիայի կառավարությունն ընդունում է այն, որ դիմողի՝ սեփականությունը վերահսկելու իրավունքի կորուստը պայմանավորված է թուրքիայի զինված ուժերի կողմից Կիպրոսի հյուսիսային շրջանի գրավմամբ և «ՅԿԹՅ»-ի ստեղծմամբ (տե՛ս վերոնշյալ նախնական առարկությունների վճիռը, էջ 24, կետ 63): Բացի դրանից, չի վիճարկվել այն հարցը, որ դիմողին մի քանի առիթներով թուրք զինվորականները թույլ չեն տվել մուտք գործել իր սեփականություն հանդիսացող տարածք (տե՛ս վերը՝ կետեր 12-13):

Այնուամենայնիվ, վարույթի ընթացքում, թուրքիայի կառավարությունը մերժել է վիճարկվող հարցերի առնչությամբ պետության պատասխանատվությունը՝ հայտարարելով, որ իր զինված ուժերը գործում են բացառապես ենթադրաբար անկախ և ինքնավար «ՅԿԹՅ»-ի իշխանությունների անունից և նրանց հետ համատեղ:

55. Դատարանը հիշեցնում է, որ համաձայն Կոնվենցիայի սխեմայի՝ փաստերի հաստատումը և ստուգումը առաջին հերթին Յանադոստոլի խնդիրն է (28-րդ հոդված, կետեր 1և 31): Սակայն Դատարանը պարտավոր չէ սահմանափակվել Յանադոստոլի հաստատած փաստերով, և ազատ է տալու իր սեփական գնահատականը՝ հիմնվելով իր տրամադրության տակ գտնվող նյութերի վրա (տե՛ս , *inter alia*, Կրուզ Վալասը և այլոք ընդդեմ Շվեդիայի 1991թ. մարտի 20-ի վճիռը, Շարքեր A, թիվ 201, էջ 29, կետ 74, Կլասսն ընդդեմ Գերմանիայի 1993թ. սեպտեմբերի 22-ի վճիռը, Շարքեր A, թիվ 269, էջ 17, կետ 29, և Մաքթանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1995թ. սեպտեմբերի 27-ի վճիռը, Շարքեր A, թիվ 324, էջ 50, կետ 168):

56. Յանադոստոլը գտել է, որ դիմողին թույլ չի տրվել և շարունակվում է թույլ չտրվել մուտք գործել Յուսիսային Կիպրոս՝ Կիպրոսում թուրքիայի զինված ուժերի ներկայության և սահմանային գոտում լիարժեք վերահսկողության իրականացման հետևանքով (տե՛ս Յանադոստոլի 1993թ. հուլիսի 8-ի գեկույցը, էջ 16, կետեր 93-95): «Վերահսկման» վերաբերյալ այս հետևության նման սահմանափակ շրջանակը պայմանավորված է այն որակմամբ, որը Յանադոստոլը տվել է դիմողի գանգատին. այն է՝ գանգատը հիմնականում վերաբերում էր բուֆերային գոտում տեղաշարժվելու ազատությանը (տե՛ս ստորև՝ կետեր 59 և 61): Դատարանը, սակայն, այս ապացույցը պետք է գնահատի այն հարցի կապակցությամբ որոշում կայացնելու նպատակով, թե արդյո՞ք դիմողի՝ իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու շարունակական մերժման և դրա հետևանքով այդ սեփականության նկատմամբ վերահսկողության կորստի համար պատասխանատու է թուրքիան:

Կարիք չկա որոշելու, ինչպես առաջարկել են դիմողը և Կիպրոսի կառավարությունը, թե արդյոք թուրքիան փաստացիորեն իրականացնում է մանրամասն վերահսկողություն «ՅԿԹՅ»-ի իշխանությունների քաղաքականության և գործողությունների նկատմամբ: Յուսիսային Կիպրոսում ակտիվ գործողություններում ներգրավված զինվորական ստորաբաժանումների մեծ թվաքանակը (տե՛ս վերը՝ կետ 16) վկայում է, որ թուրքիայի բանակը իսկապես իրականացնում է կղզու այդ հատվածի արդյունավետ ամբողջական վերահսկում:

Նման վերահսկողությունը, համաձայն համապատասխան քննության և գործի հանգամանքների, հանգեցնում է «ՀԿԹՀ»-ի քաղաքականության և գործողությունների համար նրա պատասխանատվության (տե՛ս վերը՝ կետ 52): Այդ իսկ պատճառով, բոլոր նրանք, որոնք վրա որևէ ազդեցություն են ունենում նման քաղաքականությունը և գործողությունները, ենթակա են Թուրքիայի «իրավագործությանը»՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի նպատակներից ելնելով: Այսպիսով, նրա պարտավորությունը՝ ապահովելու դիմողի՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները, տարածվում է Հյուսիսային Կիպրոսի տարածքի վրա:

Ելնելով այս եզրակացությունից՝ Դատարանը կարիք չունի իր դիրքորոշումը հայտնելու Դատարանում հանդես եկած սուբյեկտների այն փաստարկների վերաբերյալ, որոնք առնչվում են միջազգային իրավունքի համաձայն 1974թ. Թուրքիայի զինված ուժերի կղզի մուտք գործելու օրինականությանը կամ անօրինականությանը, քանի որ, ինչպես վերը նշվել է, Կոնվենցիայի համաձայն պետության պատասխանատվության հարցի որոշումը չի պահանջում նմանատիպ հարցադրում (տե՛ս վերը՝ կետ 52): Այս համատեքստում, բավական է հիշեցնել, որ Դատարանը գտել է, որ միջազգային հանրությունը համարում է, որ Կիպրոսի Հանրապետությունը հանդիսանում է կղզու միակ օրինական կառավարությունը և, հետևաբար, հրաժարվում է ճանաչել որպես պետություն «ՀԿԹՀ»-ի օրինականությունը՝ միջազգային իրավունքի իմաստով (տե՛ս վերը՝ կետ 44):

57. Վերոնշյալ հետևություններից բխում է, որ դիմողին Հյուսիսային Կիպրոսում իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու շարունակական մերժումը և դրա հետևանքով այդ սեփականությունը վերահսկելու կորուստը՝ 1-ին հոդվածի համաձայն, Թուրքիայի «իրավագործության» ներքո են և, հետևաբար, դրանց համար պատասխանատու է Թուրքիան:

Բ. Միջանտությունը սեփականության իրավունքներին

58. Դիմողը և Կիպրոսի կառավարությունն ընդգծել են, որ հակառակ Հանձնաժողովի մեկնաբանությանը, զանգատը չի վերաբերում զուտ սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելուն, այլ շատ ավելի լայն է և վերաբերում է փաստացի իրավիճակին. մուտքի շարունակական մերժումը հանգեցրել է նրան, որ դիմողը փաստորեն կորցրել է վերահսկման, ինչպես նաև իր հողն օգտագործելու, վաճառելու, կտակելու, գրավ դնելու, մշակելու և վայելելու հնարավորությունը: Նրանք պնդում են, որ այս իրավիճակը կարող է նույնացվել *de facto* բռնագրավման հետ՝ Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով: Նրանք հերքել են, որ տեղի է ունեցել պաշտոնական բռնագրավում, բայց ավելացրել են, որ նույնիսկ եթե լինեին պաշտոնական բռնագրավման փորձեր, ապա այդ գործողությունները պետք է անտեսվեին, քանի որ անհամատեղելի են միջազգային իրավունքի հետ:

59. Թուրքիայի կառավարության և Հանձնաժողովի տեսանկյունից գործը վերաբերում է զուտ սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելուն և այդ սեփականությունն անարգել օգտագործելու իրավունքին, ինչն ինքնուրույն չի ներառում ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Այնուհետև Թուրքիայի կառավարությունը հայտարարել է, որ եթե ճանաչվեր դիմողի՝ անկախ կղզում *de facto* տիրող քաղաքական իրավիճակից, իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու բացարձակ ազատություն, ապա դա կխարխլեր միջհամայնքային երկխոսությունը, ինչը միակ պատշաճ միջոցն էր այս հիմնախնդիրը լուծելու համար:

60. Նախ և առաջ, Դատարանն ընդունելիության վերաբերյալ Հանձնաժողովի որոշումից հետևություն է անում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման

վրա դիմողի ներկայացրած գանգատը չի սահմանափակվում միայն դիմողի՝ իր սեփականություն հանդիսացող տարածք ֆիզիկապես մուտք գործելով: Նրա գանգատն ըստ Հանձնաժողովին ներկայացրած գանգատի ձևի՝ այն մասին էր, որ Թուրքիան, մերժելով նրան մուտք գործել իր սեփականություն հանդիսացող տարածք, «աստիճանաբար, տասնվեց տարիների ընթացքում ազդել է դիմողի՝ որպես սեփականատիրոջ, իրավունքների վրա և, մասնավորապես, իր սեփականությունն անարգել օգտագործելու իր իրավունքի վրա՝ այդպիսով խախտելով 1-ին հոդվածը» (տե՛ս Հանձնաժողովի 1993թ. հուլիսի 8-ի գեկույցը, էջ 21, և ընդունելիության որոշումը Քրիստոստոմոսը, Պապաքրիստոստոմոսը և Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գանգատի վերաբերյալ, DR 68, էջ 228): Բացի դրանից, հենց այս գանգատն էր ներկայացված դիմողների և Թուրքիայի կառավարության գրավոր ու բանավոր բացատրություններում:

61. Ելնելով վերոհիշյալից՝ Դատարանը չի կարող ընդունել դիմողի գանգատի այն որակումը, որ այն վերաբերում է տեղաշարժվելու ազատության իրավունքին: Հետևաբար, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է:

62. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք հոդված 1-ը խախտվել է, Դատարանը նախ և առաջ հիշեցնում է իր այն եզրակացությունը, որ դիմողը՝ այս հոդվածի նպատակների համար, պետք է համարվի հողի օրինական սեփականատերը (տե՛ս վերը՝ կետեր 39-47):

63. Սակայն այն փաստը, որ դիմողը 1974թ. ի վեր չի ունեցել իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու հնարավորություն, հանգեցրել է նրան, որ վերջինս փաստացիորեն կորցրել է իր սեփականությունը վերահսկելու, ինչպես նաև այն օգտագործելու հնարավորությունը: Այսպիսով, շարունակական մերժումը պետք է դիտարկվի որպես միջամտություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված նրա իրավունքներին: Նման միջամտությունը, հաշվի առնելով տվյալ գործի բացառիկ հանգամանքները, որոնց անդրադարձել են դիմողն ու Կիպրոսի կառավարությունը (տե՛ս վերը՝ կետեր 49-50), չի կարող համարվել ո՛չ սեփականությունից զրկում, ո՛չ էլ օգտագործման նկատմամբ վերահսկողություն՝ թիվ 1 արձանագրություն 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերի իմաստով: Սակայն այն, անկասկած, այդ դրույթի առաջին նախադասության իմաստի շրջանակներում է՝ որպես միջամտություն գույքն անարգել օգտագործելու իրավունքին: Այս առումով Դատարանը նկատում է, որ խոչընդոտը կարող է հավասարազոր լինել Կոնվենցիայի խախտմանը՝ ուղղակի որպես իրավական խոչընդոտ (տե՛ս, mutatis mutandis, Եյրին ընդդեմ Իռլանդիայի 1979թ. հոկտեմբերի 9-ի վճիռը, Շարքեր A, թիվ 32, էջ 14, կետ 25):

64. Բացի «ՀԿԹՀ»-ի գործողությունները արդարացնող անհրաժեշտության դոկտրինայի հպանցիկ հիշատակումից, և այն փաստն ակնարկելուց, որ սեփականության իրավունքները միջհամայնքային երկխոսությունների առարկա էին, Թուրքիայի կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստարկ, որը կարողարացներ դիմողի սեփականության իրավունքին վերոհիշյալ միջամտությունը, ինչի համար ինքը պատասխանատու է:

Սակայն այդպես էլ չի բացատրվել, թե ինչպես է 1974թ. կղզու տարածք Թուրքիայի ներխուժմանը հաջորդող տարիների ընթացքում՝ տեղահանված կիպրացի թուրք փախստականներին վերաբնակեցնելու անհրաժեշտությունն արդարացնում դիմողի սեփականատիրական իրավունքների լիակատար մերժումը՝ նրա սեփականություն հանդիսացող տարածք մուտքի շարունակական և բացարձակ մերժման և առանց որևէ փոխհատուցման դրա բռնագրավման միջոցով:

Այն հանգամանքը, որ սեփականության իրավունքները հանդիսանում էին Կիպրոսի երկու համայնքների միջհամայնքային երկխոսությունների առարկա, նույնպես չի կարող արդարացնել այս իրադրությունը՝ համաձայն Կոնվենցիայի:

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ Դատարանը եզրակացնում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը խախտվել է և շարունակում է խախտվել:

II. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վիճարկվող խախտումները

65. Դիմողը նաև պնդում էր, որ տեղի է ունեցել անարդարացի միջամտություն իր՝ տան նկատմամբ հարգանքի իրավունքին, ինչը խախտում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, որի 1-ին կետը, *inter alia*, սահմանում է, որ.

«Յուրաքանչյուր ոք ունի իր տան նկատմամբ... հարգանքի իրավունք...»:

Այս կապակցությամբ նա ընդգծել է, որ մեծացել է Կիրենիայում, որտեղ ապրել է իր ընտանիքի մի քանի սերունդ և որտեղ նրա պապը և հայրը հարգված բժիշկներ են եղել: Նա ընդունել է, որ ամուսնությունից հետո տեղափոխվել է Նիկոսիա, և որ այն ժամանակվանից նրա տունն այնտեղ էր: Սակայն նա պատրաստվում էր ապրել այն բնակարաններից մեկում, որոնք սկսել էին կառուցվել այն ժամանակ, երբ 1974թ. Թուրքիան գրավել է Հյուսիսային Կիպրոսը (տե՛ս վերը՝ կետ 12): Արդյունքում, շինարարական աշխատանքները մնացել են անավարտ, իսկ հաջորդող իրադարձությունները խոչընդոտել են նրա վերադարձն այն քաղաք, որը նա համարում էր իր հայրենի քաղաքը:

66. Դատարանը նկատում է, որ դիմողի տունը չէր գտնվում խնդրո առարկա տարածքում: Դատարանի կարծիքով, եթե հոդված 8-ում տեղ գտած «տուն» հասկացության իմաստը տարածվի նաև այն սեփականության վրա, որի վրա նախատեսվում է կառուցել տուն՝ դրանում բնակվելու նպատակով, ապա դա կաղավաղի այդ հասկացության իմաստը: Այդ հասկացությունը չի կարող մեկնաբանվել նաև որպես պետության որևէ տարածք, որտեղ որևէ մեկը ծնվել է և ունի արմատներ, բայց որտեղ այլևս չի բնակվում:

Հետևաբար, 8-րդ հոդվածի համաձայն դիմողի իրավունքները չեն խախտվել:

IV. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառումը

67. Կոնվենցիայի 50-րդ հոդվածը սահմանում է.

«Այն դեպքում, եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ որևէ այլ իշխանություններ կայացրել են որոշում կամ կիրառել են միջոցներ, որոնք ամբողջովին կամ մասամբ հակասում են Կոնվենցիայով... սահմանված պարտականություններին, և եթե նշված Կողմի ներքին օրենքը թույլ է տալիս այդ որոշումների կամ միջոցների հետևանքների միայն մասնակի փոխհատուցում, ապա Դատարանի որոշումը, անհրաժեշտության դեպքում, պետք է տուժած կողմի համար սահմանի արդար բավարարում»:

68. Դիմողն իր հուշագրում այս կապակցությամբ ներկայացրել է հետևյալ պահանջները. (ա) փոխհատուցում նյութական վնասների դիմաց՝ 1987թ. հունվարից ի վեր հողից ստացվող եկամտի կորուստը՝ 531.900 կիպրոսական ֆունտ, (բ) փոխհատուցում ոչ նյութական վնասների դիմաց՝ պատժիչ վնասների՝ նույնքան, որքան պահանջվել էր դրամական վնասների համար, (գ) թույլտվություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իր իրավունքներն ապագայում

ազատորեն իրականացնելու համար, և (դ) չճշտված գումար՝ ծախսերի և ծախքերի դիմաց:

Իր հուշագրում Թուրքիայի կառավարությունը չի ներկայացրել որևէ մեկնաբանություն այս հարցերի վերաբերյալ: Այս հարցերը չեն քննարկվել նաև Դատարանի առջև ըստ էության լսումների ժամանակ հանդես եկած անձանց կողմից:

69. Ելնելով այս հանգամանքներից՝ Դատարանը, հաշվի առնելով գործի բացառիկ բնույթը, համարում է, որ 50-րդ հոդվածի կիրառման հարցը դեռևս պատրաստ չէ որոշման համար: Հետևաբար, հարցը պետք է կասեցվի և հետագա ընթացակարգը պետք է հաստատվի՝ պատշաճ ուշադրություն դարձնելով Թուրքիայի կառավարության և դիմողի համաձայնության գալու հնարավորությանը:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ, ԴԱՏԱՐԱՆԸ

1. Տասնմեկ ձայնով՝ ընդդեմ վեցի, մերժում է *ratione temporis* նախնական առարկությունը,
2. Վճռում է՝ տասնմեկ ձայնով՝ ընդդեմ վեցի, որ դիմողի սեփականություն հանդիսացող տարածք մուտքի մերժման և դրա հետևանքով այդ սեփականությունը վերահսկելու հնարավորության կորստի համար պատասխանատու է Թուրքիան,
3. Վճռում է՝ տասնմեկ ձայնով՝ ընդդեմ վեցի, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում,
4. Վճռում է՝ միաձայն, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում,
5. Վճռում է՝ միաձայն, որ Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէ որոշման համար, և, հետևաբար՝

(ա) կասեցնում է նշված հարցը,

(բ) հրավիրում է Թուրքիայի կառավարությանը և դիմողին առաջիկա վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց գրավոր բացատրություններն այս հարցի վերաբերյալ, և հատկապես տեղյակ պահել Դատարանին որևէ համաձայնության մասին, որին նրանք կարող են հանգել,

(գ) կասեցնում է հետագա ընթացակարգի հարցը և Պալատի նախագահին լիազորում է հաստատել նույնը, եթե կլինի դրա կարիքը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, և հրապարակվել է դռնբաց նիստի ժամանակ՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգ, 1996թ. դեկտեմբերի 18-ին:

Ստորագրված է. Ռոլվ Ռիսդալ

Նախագահ

Ստորագրված է. Հերբերթ Փեթզոլդ

Քարտուղար

Ըստ Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի A կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի՝ սույն վճռին կցվում են հետևյալ առանձին կարծիքները.

- (ա) պրն Վիլդհաբերի համընկնող կարծիքը, որին միացել է պրն Ռիսդալը,
- (բ) պրն Բերնհարդտի մասնակի չհամընկնող կարծիքը, որին միացել է պրն Լոպես Ռոչան,
- (գ) պրն Բակայի մասնակի չհամընկնող կարծիքը,
- (դ) պրն Ջամբրելի մասնակի չհամընկնող կարծիքը,
- (ե) պրն Փետիտիի մասնակի չհամընկնող կարծիքը,
- (զ) պրն Գյուլուկյուկի մասնակի չհամընկնող կարծիքը:

Ռ.Ռ.
Յ.Փ.

Պրն Վիլդհաբերի համընկնող կարծիքը, որին միացել է պրն Ռիսդալը

Դատարանը կարիք չուներ որոշակիորեն արտահայտվելու Թուրքիայի այն պնդման առնչությամբ, որ կիպրացի թուրք ժողովուրդը հռչակել է «ՅԿԹՅ»-ն՝ հիմնվելով իրենց ինքնորոշման իրավունքի վրա (տե՛ս վճռի կետ 35): Այս պնդումը, անկասկած, պետք է մերժվեր:

Մինչև վերջերս միջազգային պրակտիկան վկայում է, որ ինքնորոշման իրավունքն իր գործնական կիրառման մեջ հավասարազոր է և, անշուշտ, սահմանափակվում է ապագադրության իրավունքով: Վերջին տարիների ընթացքում երևան է եկել մի կոնսենսուս, ըստ որի՝ ժողովուրդները կարող են գործադրել իրենց ինքնորոշման իրավունքն այն դեպքերում, եթե հետևողականորեն և նվաստացուցիչ կերպով խախտվում են նրանց՝ մարդու իրավունքները, կամ եթե նրանք ընդհանրապես ներկայացված չեն կամ ներկայացված են թերի՝ հակաժողովրդավարական և խտրական եղանակով: Եթե այս նկարագրությունը ճիշտ է, ապա ինքնորոշման իրավունքը մի միջոց է, որը կարող է օգտագործվել վերահաստատելու համար մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ միջազգային չափորոշիչները:

Սույն գործում Դատարանը դեմ-հանդիման է դուրս եկել դիմողի հետ, որը վիճարկում է Կոնվենցիայի որոշ երաշխիքների խախտումներ, պատասխանող՝ Թուրքիայի կառավարության հետ, որը վկայակոչում է «ՅԿԹՅ»-ի ինքնորոշման իրավունքը՝ խուսափելու համար պատասխանատվությունից Կոնվենցիայի որոշ երաշխիքների խախտումների համար, և միջազգային հանրության հետ, որը հրաժարվում է ճանաչել այն միավորին («ՅԿԹՅ»ին), որն ինքնորոշման իրավունք է պահանջում:

1983թ. միջազգային հանրությունը՝ մերժելով ճանաչել «ՅԿԹՅ»-ն որպես նոր պետություն ըստ միջազգային իրավունքի (տե՛ս վճռի 42-րդ կետ), միևնույն ժամանակ ոչ բացահայտորեն մերժել է «ՅԿԹՅ»-ի՝ անջատման եղանակով ինքնորոշման պահանջը: Այդ ժամանակ ինքնորոշման իրավունքի և մարդու իրավունքների ու ժողովրդավարության վերաբերյալ միջազգային ստանդարտների պահպանման միջև կապն այնքան սերտ չէր, ինչպես այժմ: «ՅԿԹՅ»-ն կազմված է Կիպրոսում ի սկզբանե փոքրամասնություն հանդիսացող խմբի (այն է՝ « կիպրացի թուրքերի») կողմից, որը, սակայն, այժմ կղզու հյուսիսային շրջանում դարձել է մեծամասնություն: Այս խումբը

վկայակոչում է ինքնորոշման իրավունքը, որից 1985թ.Սահմանադրությամբ զրկել է «ՀԿԹՀ»-ի տարածքում բնակվող «կիպրացի հույներին»: Սա հանգեցնում է այն եզրակացության, որ այն դեպքում, երբ ժամանակակից ինքնորոշման իրավունքը չի ամրապնդում կամ վերահաստատում մարդու իրավունքները և ժողովրդավարությունը բոլորի և բոլոր խմբերի համար, ինչն առկա է սույն գործում, այն չի կարող վկայակոչվել՝ հաղթահարելու համար «ՀԿԹՀ»-ն չճանաչելու՝ միջազգային հանրության քաղաքականությունը:

Պրն Բերնհարդտի մասնակի չհամընկնող կարծիքը, որին միացել է պրն Լոպես Ռոչան

Ես կողմ եմ քվեարկել *ratione temporis* նախնական առարկությունն ընդունելուն և դեմ՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրելուն: Մինչև գործի հիմնական երկու ասպեկտներին անցնելը, իմ կարծիքով, անհրաժեշտ է անել որոշ ընդհանուր մեկնաբանություններ:

1. Սույն գործի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հնարավոր չէ անհատ զոհի շուրջ ստեղծված իրավիճակն անջատել բարդ պատմական զարգացումներից և նույնքան բարդ ներկա իրավիճակից: Իրականում, Դատարանի վճիռը վերաբերում է ոչ միայն տկն Լուիզիդուին, այլ նաև այն հարյուր-հազարավոր կիպրացի հույներին, որոնք ունեն (կամ ունեցել են) սեփականություն Յուսիսային Կիպրոսում: Այն կարող է նաև անդրադառնալ այն կիպրացի թուրքերի վրա, որոնց արգելվում է այցելել և զբաղեցնել Հարավային Կիպրոսում գտնվող իրենց սեփականությունը: Դա կարող է վերաբերել նույնիսկ երրորդ երկրների այն քաղաքացիներին, որոնց արգելվում է այցելել այն տարածքներ, որտեղ նրանք ունեն սեփականություն և տներ: Կիպրոսի երկու մասերի միջև փաստացի սահմանի ցավալի և դաժան հետևանքն այն է, որ բազմաթիվ անհատներ անջատվել և բաժանվել են իրենց սեփականությունից և իրենց նախկին տներից:

Ինչպես և Մեծ պալատի դատավորների մեծամասնությունը՝ ես նույնպես կասկած չունեմ, որ ներկայումս ստեղծված իրավիճակի պատասխանատվության զգալի մասը կրում է Թուրքիան: Սակայն այս դրամայում կան նաև այլ մասնակիցներ և հանգամանքներ: 1974թ. պետական հեղաշրջումը ելակետն է: Դրան հետևել են թուրքական ներխուժումը և բնակչության տեղաշարժերը հյուսիսից հարավ և հարավից հյուսիս, ինչպես նաև բազմաթիվ այլ իրադարձություններ: Այսպես կոչված՝ «Յուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» հռչակումը, որ միջազգային հանրության կողմից չի ճանաչվել որպես պետություն, այդ իրադարձություններից մեկն է: Տարաբնույթ ազդեցությունների և իրադարձությունների հետևանքը «երկաթյա պատն» է, որն արդեն երկու տասնամյակ է, ինչ գոյություն ունի, և որը վերահսկվում է ՄԱԿ-ի զինված ուժերի կողմից: Մինչ այսօր Կիպրոսի վերամիավորման նպատակով բոլոր բանակցությունները և բանակցությունների առաջարկները մատնվել են անհաջողության: Ո՞վ է պատասխանատու այս անհաջողությունների համար: Մի՞թե միայն մեկ կողմը: Արդյո՞ք հնարավոր է հստակորեն պատասխանել այս և բազմաթիվ այլ հարցերի, և այդ պատասխանների հիման վրա կատարել իրավական եզրահանգումներ:

Տկն Լուիզիդուի գործը հետևանք չէ թուրք զինվորականների առանձին գործողության, որն ուղղված էր նրա սեփականության կամ տեղաշարժվելու

ազատության դեմ, այլ հետևանք է 1974թ. սահմանագծի առաջացման և դրա մինչ այսօր փակ լինելուն:

2. Թուրքիան ընդունել է Դատարանի իրավագործությունը միայն այն փաստերի առնչությամբ, որոնք տեղի են ունեցել 1990թ. հունվարի 22-ից հետո: Նմանատիպ սահմանափակումը բացառում է նախկինում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ հարցադրումները կամ վերջնական իրավական որակումները, նույնիսկ եթե դրանք համատեղելի չեն պետության կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հետ:

Կոնվենցիայի մարմիններն ընդունել են «շարունակական խախտումների» գաղափարը, խախտումներ, որոնք սկսվել են վճռական ամսաթվից առաջ և շարունակվում են առայսօր: Ես անվերապահորեն համաձայն եմ այս գաղափարին, սակայն պետք է զնահատվեն դրա սահմանները և կիրառման շրջանակները: Եթե անձը գտնվում է բանտում վճռական ամսաթվից առաջ և հետո, եթե կոնկրետ գույքն անօրինականորեն գրավված է վճռական ամսաթվից առաջ և հետո (ինչպես Պապամիկալոպուլուսը և այլոք ընդդեմ Յունաստանի 1993թ. հունիսի 24-ի վճռում, Շարքեր A, թիվ 260-B), կասկած չկա, որ Դատարանն իրավագոր է քննության առնելու այն փաստերը և հանգամանքները, որոնք տեղի են ունեցել խնդրո առարկա ամսաթվից հետո: Նման գործերում էական փաստը վերաբերում է պետական մարմինների այն փաստացի վարքագծին, որն անհամատեղելի է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հետ:

Իմ կարծիքով՝ փաստացի և իրավական իրավիճակն այլ է, երբ որոշակի պատմական իրադարձությունների հետևանքով առաջացել է մի իրավիճակ, ինչպիսին է սահմանի փակումը, ինչը ավտոմատ կերպով հանգեցնում է բազմաթիվ գործերի ի հայտ գալուն: Տվյալ գործում որոշիչ իրադարձությունը տեղի է ունեցել դեռևս 1974թ.: Այդ ժամանակվանից ի վեր տկն Լուիզիդուն չի կարողացել այցելել Յուսիսային Կիպրոսում գտնվող իր սեփականությունը: Այս իրավիճակը գոյություն է ունեցել մինչև 1985թ. այսպես կոչված՝ «Յուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» Սահմանադրության ընդունումը և դրանով նախատեսված բռնագրավումը, և դրանից հետո: Ես կիսում եմ Դատարանի կասկածները (տե՛ս վճռի 45-47 կետեր)՝ կապված բռնագրավման վավերականության հետ, սակայն սա որոշիչ չէ: Թուրքիան ճանաչել է Դատարանի իրավագործությունը միայն այն «փաստերի վերաբերյալ... որոնք տեղի են ունեցել սույն հայտարարության ի պահ հանձնելու ամսաթվից հետո»: Իմ համոզմամբ՝ 1974թ. սահմանի փակվելը հանդիսանում է հիմնական փաստը, և դրան հաջորդող և մինչ այժմ շարունակվող իրավիճակը չպետք է հասկացվի որպես «շարունակական խախտում»:

Այդ իսկ պատճառով ես գտնում եմ, որ Թուրքիայի բարձրագրած *ratione temporis* նախնական առարկությունն իրավական տեսանկյունից հիմնավորված է:

3. Նույնիսկ եթե ես կարողանայի այս հարցի կապակցությամբ միանալ Դատարանի մեծամասնությանը, միևնույն է, ես չեի կարողանա գտնել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Ինչպես արդեն բացատրվել է վերը, թուրքական զինված ուժերի ներկայությունը Յուսիսային Կիպրոսում ընդամենը մի մասնիկն է չափազանց բարդ զարգացումների և իրավիճակի: Ինչպես բացատրվել և որոշվել է նախնական առարկությունների կապակցությամբ Լուիզիդուի վճռում (1995թ. մարտի 23, Շարքեր A, թիվ 310)

Թուրքիան կարող է պատասխանատվության ենթարկվել Հյուսիսային Կիպրոսի տարածքում թուրք զինվորականների և պաշտոնյաների կոնկրետ գործողությունների համար: Սակայն տվյալ գործում մենք բախվում ենք հատուկ իրավիճակի հետ. կիպրացի հույները չեն կարող այցելել կղզու հյուսիսում գտնվող իրենց սեփականություն և բնակվել այնտեղ այն պատճառով, որ գոյություն ունի փաստացի սահման, որը պաշտպանվում է ՄԱԿ-ի հրամանատարության ներքո գտնվող զինված ուժերի կողմից: Թուրքական զինված ուժերի ներկայությունը, ինչպես նաև «ՀԿԹՀ»-ին՝ Թուրքիայի օժանդակությունը կարևոր գործոններ են ստեղծված իրավիճակում: Սակայն ես չեմ համարում, որ կարելի է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը հիմնել բացառապես այն հանգամանքի վրա, որ Թուրքիայի ներկայությունը կղզում անօրինական է, և որ Թուրքիան պատասխանատու է Հյուսիսային Կիպրոսում տեղի ունեցող գրեթե բոլոր իրադարձությունների համար:

Պրն Բակայի մասնակի չհամընկնող կարծիքը

Տվյալ գործում չափազանց դժվար է որոշել, մի կողմից, թե արդյո՞ք դիմողի կողմից վիճարկվող խախտումն ունի շարունակական բնույթ, մյուս կողմից, թե արդյո՞ք տեղի է ունեցել դիմողի սեփականության միաժամանակյա բռնագրավում՝ հետագա շարունակական հետևանքներով: Ես համաձայն եմ մեծամասնության հետ, որ այս հարցի պատասխանն ուղղակիորեն հետևում է Կառավարության *ratione temporis* նախնական առարկության կապակցությամբ վճռին:

Գործի փաստերի հիման վրա ես եկա այն եզրակացության, որ տկն Լուիզիդոլի՝ իր սեփականության նկատմամբ վերահսկողության կորուստն ուղղակիորեն հետևում է 1974թ. թուրքական ռազմական գործողություններին: Այն ժամանակվանից սկսած նա հնարավորություն չի ունեցել տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իր սեփականությունը որևէ կերպ՝ չունենալով նույնիսկ մուտքի հնարավորություն: Այսպիսով, կարելի է ասել, որ տեղ է գտել *de facto* բռնագրավում:

Այնուամենայնիվ, 1974թ. մինչև 1985թ. դիմողը դեռևս հանդիսացել է իր հողի իրավական սեփականատերը: Նա ենթադրաբար կորցրել է իր սեփականության իրավունքը 1985թ. մայիսի 7-ի «ՀԿԹՀ»-ի Սահմանադրության 159-րդ (1) հոդվածի հիման վրա կատարված պաշտոնական բռնագրավումից հետո. այս դրույթը միտված է եղել կարգավորելու *de facto* գոյություն ունեցող իրավիճակը:

Զնայած այն հանգամանքին, որ ես կիսում եմ Դատարանի կարծիքը՝ միջազգային իրավական հանրության կողմից «ՀԿԹՀ»-ն չճանաչելու և դրան հետևող իրավական հետևանքների վերաբերյալ, ես նաև համարում եմ, որ դրա իրավական դրույթները «վկայակոչվել են Թուրքիայի կառավարության կողմից»: Սույն գործում սեփականության հարցերի հետ կապված իրավական վիճակը չափազանց նման է այն վիճակին, որ ստեղծվել էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նախկին խորհրդային պետություններում: Այդ երկրներում, որոնք հանդիսանում էին միջազգայնորեն ճանաչված պետություններ, բավականին երկար ժամանակ ազգայնացման օրենսդրության և այլ օրինական միջոցների ճանապարհով իրականացվել է բռնագրավման գործընթաց: Այս գործողությունները, որոնց հետևանքով այդ երկրներում տեղի

ունեցավ սեփականության՝ ահռելի ծավալներ ունեցող վերաբաժանում, չեն կարող մշտապես արդարացվել զուտ այն փաստից ելնելով, որ դրա իրականացման պահին այդ պետությունները միջազգայնորեն ճանաչված էին:

Մյուս կողմից, ինչպես «ՅԿԹՅ»-ի Սահմանադրության 159-րդ հոդվածը, այնպես էլ մի շարք այլ իրավական դրույթներ չեն կարող բոլորովին անտեսվել և զրկվել որևէ ազդեցությունից՝ միայն այն հանգամանքից ելնելով, որ ՅուԼԻԱՅԻՆ Կիպրոսի այդ շրջանը միջազգայնորեն չի ճանաչվել: Վճռի 45-րդ կետում իրավացիորեն ասվում է, որ միջազգային իրավունքն ընդունում է որոշ պայմանավորվածությունների լեգիտիմությունն այն իրավիճակում, երբ «դրա ազդեցությունները կարող են անտեսվել միայն ի վնաս այդ տարածքի բնակիչների»: Սակայն այս տեսակետի ամբողջական իմաստը դեռևս ենթակա է բազմաթիվ մեկնաբանությունների, ինչի մասին ակնհայտորեն վկայում են նախկին խորհրդային երկրներում սեփականության հետ կապված հարցերի վերջին ամենատարբեր իրավական լուծումները: Այնուամենայնիվ, այս սկզբունքն ունի որոշակի կիրառում անշարժ գույքի ոլորտում՝ «ՅԿԹՅ»-ում ստեղծված իրավիճակում, երբ, կարելի է ասել, որ համայնքի շահերը պահանջում էին, եթե ոչ հարկադրում, կարգավորման որևէ ձև: Իմ կարծիքով, Դատարանը կարող է հաշվի առնել այս սկզբունքը՝ որոշելու համար, թե արդյոք գոյություն ունեցող իրավիճակը շարունակական է՝ առանց հաստատելու կամ ընդունելու 1985թ. «ՅԿԹՅ»-ի կողմից գործադրված՝ սեփականության վերաբաժանման ամբողջ գործընթացի լեգիտիմությունը:

Հաշվի առնելով դիմողի սեփականության բռնագրավման *de facto* բնույթը՝ մինչև 1985թ., ինչպես նաև 1985թ. Սահմանադրության՝ գործին առնչվող դրույթները, որոնք ներգործում են այդ սեփականության վրա՝ ես չեմ կարող կիսել Դատարանի կարծիքը, որ դիմողի գանգատը վերաբերում է շարունակական իրավիճակի: Քանի որ Դատարանի իրավագործությունը տարածվում է միայն այն հարցերի վրա, որոնք երևան են եկել 1990թ. հունվարի 22-ից հետո, Կառավարության *ratione temporis* նախնական առարկությունը պետք է համարվի հիմնավորված:

Պրն Ջամբրեկի մասնակի չհամընկնող կարծիքը I.

1. Տվյալ գործի նախնական առարկությունների կապակցությամբ որոշման մեջ Դատարանը *ratione temporis* առարկությունը միացրել է գործի հանգամանքներին: Ըստ դատարանի կարծիքի՝ համապատասխան սահմանափակումների ճիշտ մեկնաբանությունից և կիրառումից բխում էին փաստի և իրավունքի խրթին հարցեր, որոնք սերտորեն կապված էին գործի էության հետ (1995թ. մարտի 23-ի վճռի 103 և 104 կետեր):

Հետևաբար, Դատարանը նախ և առաջ պետք է քննության առներ դիմողի կողմից վիճարկվող՝ 1990թ. հունվարի 22-ից հետո նրա սեփականության իրավունքի շարունակական խախտումը: Այդ քննությունը պահանջում էր առաջին հերթին գնահատել, թե արդյոք դիմողը կարող էր շարունակել համարվել հողի օրինական սեփականատերը, ինչն իր հերթին կախված էր մինչև նշված ամսաթիվը այդ սեփականությունը կորցնելու կամ չկորցնելու եղանակի պարզաբանումից: Մասնավորապես, արդյո՞ք դա տեղի է ունեցել

միաժամանակյա գործողության հետևանքով, եթե այո, ապա ի՞նչ գործողության: Թե՞ դա տեղի է ունեցել ավելի երկարատև գործընթացի հետևանքով, որը հանգեցրել է անվերադարձ բռնագրավման՝ հնարավոր է 1985թ. մայիսի 7-ի «ՅԿԹՅ»-ի Սահմանադրության 159-րդ հոդվածի հիման վրա:

2. Ես չկարողացա միանալ իմ գործընկերների մեծ մասի այն կարծիքին, որ չի կարելի համարել, որ տկն Լուիզիդուն կորցրել է իր սեփականատիրական իրավունքը, և որ, ելնելով դրանից, նա պետք է շարունակի համարվել հողի օրինական սեփականատերը: Մյուս կողմից, քննելով դիմողի և պատասխանող Կառավարության ներկայացրած փաստերը, ինչպես նաև այն փաստերը, որոնք հաստատվել էին Դատարանի կողմից, ես նաև չկարողացա համաձայնել հակառակ տեսակետին, այն է՝ որ նա փաստորեն կորցրել է իր սեփականության իրավունքը: Հետևաբար, կասկածելով, այնուամենայնիվ, ես չկարողացա մերժել *ratione temporis* նախնական առարկությունը:

3. Նմանատիպ պատճառներով՝ ես նաև չպարզաբանեցի ինձ համար, թե արդյոք դիմողն իր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու մերժման հետևանքով կորցրել է վերահսկողությունը դրա նկատմամբ, ինչը հանգեցրել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման, որը տեղի է ունեցել իր գույքի անարգել տնօրինման իրավունքին միջամտության արդյունքում: Հետևաբար, իմ կարծիքը չհամընկավ նաև միջամտության համար Թուրքիայի պատասխանատվության հարցում և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրելու հարցում (սույն վճռի պատճառաբանական մաս, 2-րդ և 3-րդ կետեր):

4. Սույն գործում հետաքրքիր փոխազդեցություն է տեղի ունեցել նախնական առարկությունների և այնուհետև գործի էության կապակցությամբ քվեարկությունների միջև: Կարծում եմ, որ հարկ է նշել դա՝ որպես իմ կարծիքի *obiter dictum*:

Հուշագրերում և լսումների ժամանակ մենք ականատես եղանք զանգատի ընդունելիության և վերջնական փուլերում Հանձնաժողովի անդամների ձայները «պատշաճ» հաշվարկելու վերաբերյալ վիճաբանություններին: Ինքնըստինքյան հասկանալի էր թվում, որ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարող էր ընտրել հետևյալ երեք տարբերակներից մեկը. (ա) վճռել, որ Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել՝ առանց գործի ըստ էության հանգամանքներին անդրադառնալու՝ նախնական առարկությունների վավերականությունը նախապես ճանաչելու հիմքով, (բ) վճռել, որ Կոնվենցիան չի խախտվել՝ սկզբում նախնական առարկությունները ընդունելուց և հետո գործն ըստ էության քննելուց հետո, կամ (գ) վճռել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում՝ սկզբում նախնական առարկություններն ընդունելուց և այնուհետև գործն ըստ էության քննելուց հետո:

Հետադարձ հայացքով՝ Հանձնաժողովի մեծամասնությունը կազմող ութ անդամը քվեարկել էր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման դեմ: Այդ մեծամասնությունը մեկնաբանվել է որպես հետևյալ կազմն ունեցող մեծամասնություն. երեք անդամ, ովքեր չեն արձանագրել որևէ խախտում գործի ըստ էության քննության փուլում, և հինգ անդամ, ովքեր քվեարկել են զանգատն անընդունելի հայտարարելու օգտին, և չեն արտահայտել որևէ վավերական կարծիք խախտման հարցի վերաբերյալ ըստ էության քննության փուլում՝ Կիպրոսի կառավարության դիրքորոշման կապակցությամբ, կամ էլ չեն

արտահայտել որևէ վավերական կարծիք. սա ըստ երևույթին, նախագահ Տրեչչելսի տեսակետն է, որում սակայն տեղ չի գտել նման ձևակերպում:

Ընդհանուր առմամբ, առաջին հայացքից թվում է, որ այս հարցը կարող է ունենալ երկու սկզբունքային պատճառաբանություն.

(ա) գանգատի ընդունելիության և ըստ էության փուլերի երկու ձայները միմյանցից անկախ են: Իրավագործության վերաբերյալ որոշումը, թվում է, ինքնավար է՝ ընթացակարգային տեսակետից: Սակայն այն չի կարող լինել ինքնավար գործի հանգամանքներից, որոնց հիմքի վրա որոշվում են փաստերը, իրավունքը և որևէ դատավորի փիլիսոփայական մոտեցումները: Օրինակ՝ դատավորը կարող է լինել դատական գսպման դոկտրինայի կողմնակից և, հետևաբար, պահպանողականորեն քվեարկել նախնական առարկությունների օգտին, մինչդեռ գործի էությունը կարող է նրա համար լինել բոլորովին այլ մոտեցման հարց:

Ավելին, «Սկանդինավյան դոկտրինան», որը ենթադրում է փոքրամասնության հարգանքը մեծամասնության որոշման նկատմամբ՝ շարունակելի գործերում, տվյալ հարցի նկատմամբ կիրառվելու դեպքում կառաջարկեր, որպեսզի այն դատավորը, որի նախնական առարկության վերաբերյալ առաջարկը մերժվել էր, անմիջապես ընդուներ այն, քանի որ նա զգում է կամ ավելի ճիշտ պարտավորված է՝ Դատարանի իրավասությունների վերաբերյալ որոշմամբ, բոլոր դեպքերում՝ շարունակելով գործի քննությունը ըստ էության՝ արտահայտել կարծիքներ ու քվեարկել.

(բ) երկրորդ պատճառաբանությունը կպաշտպաներ նախնական առարկությունների և ըստ էության փուլերում երկու ձայների փոխադարձ կախվածությունը: Եթե դատավորը համարում է, որ նախնական առարկությունը հիմնավորված է, նա պետք է քվեարկի խախտման դեմ հաշվի առնելով, որ, իր կարծիքով, Դատարանն իրավասու չէ որոշելու այդ հարցը և այդ իսկ պատճառով երբևէ չպետք է քննության առնի գործն ըստ էության: Եթե չհամաձայնող դատավորի կարծիքը գերակայեր, ապա Դատարանը նիստ չէր գումարի, դիմողի գանգատը չէր քննարկվի ըստ էության և, հետևաբար, չէր գրանցվի խախտում:

Սույն գործը հեռանում է երկու քննարկված հնարավորություններից՝ այն իմաստով, որ *ratione temporis* նախնական առարկության վերաբերյալ որոշումը կախված էր ըստ էության հարցերի որոշ ասպեկտների նախնական քննությունից: Այդ իսկ պատճառով, երկու տարբերակների միջև ընտրությունը չի սպառում բոլոր հնարավորությունները: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես համարում եմ, որ գործի հանգամանքները դուրս են Դատարանի իրավագործությունից *ratione temporis*, միայն Դատարանի կողմից հաստատված այն փաստերի նախնական քննությունից հետո, որոնք վերաբերում էին սեփականության իրավունքի և տնօրինման հարցին:

Իմ հետագա անհամաձայնությունը՝ վճռի պատճառաբանական մասի երկրորդ և երրորդ կետերի կապակցությամբ, հիմնավորվում է վերոհիշյալ (բ) կետում նշված պատճառաբանությամբ, ինչպես նաև այս գործի էության վերաբերյալ իմ նախնական և մասնակի պատկերացումներով և մի շարք այլ դատողություններով, որոնք ես շարադրել եմ ստորև:

II.

5. Վիճարկվող սկզբնական («միաժամանակյա») խախտումը, իմ համոզմամբ, թաքնված է դեռևս 1974թ. և նույնիսկ դրանից էլ վաղ տեղի ունեցած իրադարձությունների, փաստացի և իրավական անորոշությունների հետևում: Ինձ թվում է նաև, որ Դատարանի կարողություններից և իրավասություններից վեր է պահանջվող հստակությամբ գնահատել, թե արդյո՞ք Թուրքիայի միջամտությունը համապատասխանում էր, թե՛ ոչ, միջազգային պայմանագրերին, և արդյոք այն համապատասխանում էր, թե՛ ոչ, միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներին:

Ես պարտական եմ իմ գործընկեր դատավոր Վիլդիաբերին՝ հուշելու համար ինձ հետևյալ մտքերը: «ՀԿԹՀ»-ն չճանաչելու ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների քաղաքականությունը վավերական է միայն միջպետական մակարդակում: Հետևաբար, «ՀԿԹՀ»-ի կառավարությունը չի կարող ստեղծել օրենսդրություն կամ կատարել միջազգային իրավունքում իրավական հետևանքներ ունեցող փոփոխություններ: Սակայն չափազանցություն կլիներ ասելը, թե «ՀԿԹՀ»-ի վարչակազմի ենթադրաբար իրավական ակտերից և ոչ մեկը վավերական չէ: Օրինակ՝ «ՀԿԹՀ»-ի պաշտոնյայի կողմից «ՀԿԹՀ»-ում գրանցված ամուսնությունն իրավական հետևանքներ կունենար՝ նույնիսկ այդ «իրավագործությունից» դուրս: Նմանապես, Հյուսիսային Կիպրոսում անհատների միջև սեփականության՝ «ՀԿԹՀ»-ի պաշտոնյայի կողմից գրանցված փոխանցումն , իրավական հետևանքներ կունենար ամբողջ աշխարհում:

Անցյալում այլ երկրներում նույնպես առաջացել են նմանօրինակ իրավիճակներ: Օրինակ՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի և Չեխոսլովակիայի միջև համաձայնությամբ՝ Մյունխենի պայմանագիրը ճանաչվեց առոչինչ, սակայն անհատների միջև հողային գործարքները համարվեցին վավեր:

Բացի դրանից, 1974թ. Հյուսիսային Կիպրոսում կատարված իրադարձություններն ինքնին չէին կարող հաստատել, որ տկն Լուիզիդուն զրկվել է իր սեփականությունից: Եթե, օրինակ՝ 1975թ. կամ 1976թ. վերականգնվեր նախնական status quo-ն, ապա նա չէր կորցնի իր սեփականությունը: Սակայն նախնական status quo-ն դեռևս չի վերականգնվել: Չնայած այն հանգամանքին, որ ակնհայտ է, որ տկն Լուիզիդուն չի զրկվել իր սեփականությունից 1974թ. միաժամանակյա գործողության հետևանքով, վիճելի չէ նաև այն, որ ոչ մի սեփականության փոխանցման գործարք տեղի չի ունեցել:

Դատարանի ավելի վաղ նախադեպային իրավունքն այս կապակցությամբ միշտ գործ է ունեցել կոնկրետ իրավիճակների հետ: Ինչպես, օրինակ՝ Պապամիկոլաուն և այլոք ընդդեմ Հունաստանի վճռում (1993թ. հունիսի 24) գործը վերաբերում էր իշխանությունների կողմից ներպետական դատարանի որոշման իրականացման մերժմանը: Այս գործում իրավիճակն այլ է: Այստեղ տկն Լուիզիդունի սեփականատիրոջ կարգավիճակը ենթադրաբար փոխվել է 1974թ., կամ ավելի ճիշտ դրան հաջորդող «սեփականությունը «վերցնելու» գործընթացի» հետևանքով:

Հետևաբար, ես պետք է ենթադրեմ, որ որոշակի ժամանակահատվածում «ՀԿԹՀ»-ում տեղի ունեցած իրադարձությունները կարող են հանգեցրած լինել սեփականության փոխանցմանը: Այս դեպքում չկա ոչ մի շարունակական խախտում, քանի որ Հյուսիսային Կիպրոսում տեղի ունեցած որոշակի

գործողությունները հնարավոր է, որ արդեն ավարտված լինեին մինչև այն պահը, երբ թուրքիան իր հայտարարությամբ ճանաչել է Դատարանի իրավագործությունը:

«Շարունակական խախտման» դիկտրինան պահանջում է սկզբնակետ, այն է՝ մի վճռական իրադարձություն, որը և հանդիսանում է սկզբնական խախտումը, և դրա շարունակականությունը: Տկն Լուիզիդուի գործում, իմ կարծիքով, Դատարանը չկարողացավ միանշանակորեն հստակեցնել այս հասկացության երկու բաղկացուցիչները: Պատճառաբանությունների այս ուղղությունը, այսպիսով, ինձ հանգեցրել է եզրակացության, *inter alia*, որ *ratione temporis* առարկությունը կիրառելի է:

6. Բացի դրանից, 1974թ. ստեղծված փաստացի իրավիճակը շարունակում է գոյություն ունենալ մինչ օրս, և չկա որևէ որոշակիություն այն հարցի առումով, թե հակամարտության որ կողմը կամ, ավելի ճիշտ, բանակցային որ կոմպրոմիսային լուծումը կդառնա «առավել հաջողված»: Թեև ճշմարիտ է, որ վերահսկողության երկարատևությունը չպետք է հավասարեցվի «առավել հաջողված» լուծմանը, սակայն մյուս կողմից բոլորովին հստակ չէ, թե արդյոք «ՅԿԹՅ»-ի *de facto* կառավարությունը կշարունակի գոյություն ունենալ, թե՞ ոչ, և գոյատևելու դեպքում՝ ինչ կարգավիճակով. արդյոք այն կդառնա դաշնային կամ համադաշնային միավոր, անկախ պետություն, թե՞ որևէ մի այլ ձևով: Բոլոր դեպքերում, դիմողի նկատմամբ գործողությունների վավերականությունը կախված կլինի դրա առավել հաջողվածությունից: Հակամարտության վերջնական լուծումը, որը կունենա *post facto* միջազգային կամ երկկողմանի համաձայնության ձև, պետք է որևէ կերպ լուծի «ՅԿԹՅ»-ի գործողությունների ճանաչման հարցը՝ դրանց կատարման պահից սկսած, և/կամ մինչև այդ գործողությունները գոյություն ունեցած կարգավիճակի վերականգնման հարցը:

7. Ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային դատավորը, մինչև գործի նկատմամբ ակտիվիստական կամ ավելի զուսպ դիրքորոշում ընդունելը, որպես կանոն, պետք է քննի, թե արդյոք գործն ունի կենտրոնաձիգ բնույթ և հասունացած է որոշման համար, և արդյոք այն զուտ քաղաքական է և վիճարկելի չէ:

Հաշվի առնելով, որ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում լուրջ ջանքեր են գործադրվում Կիպրոսի հարցի խաղաղ կարգավորման համար, Եվրոպական դատարանի վճիռը կարող է գնահատվել որպես կանխորոշող: Խնդրո առարկա հարցի համապատասխան «քաղաքական բնույթը» առնչություն չունի այն հնարավոր քաղաքական հետևանքների հետ, որոնք կարող են բխել վերջնական վճիռից. բոլոր վճիռները՝ ներպետական, թե միջազգային, ունենում են որոշակի ընդհանուր հասարակական կամ քաղաքական ազդեցություններ:

Իմ կարծիքով, տվյալ գործի «քաղաքական բնույթը» ավելի շուտ կապված է այն տեղի հետ, որ զբաղեցնում են, ընդհանրապես, դատարանները և, մասնավորապես, Ստրասբուրգի մեխանիզմը՝ իշխանության բաժանման և տարանջատման համակարգում: Այստեղ դատարանների դերը տարբեր է, օրինակ, օրենսդիր և գործադիր մարմինների դերից: Դատարանները վճիռներ են կայացնում կոնկրետ և առանձին գործերի վերաբերյալ՝ հիմնվելով նախատեսված իրավական չափորոշիչների վրա: Նրանք լավ զինված չեն լայնածավալ և բարդ հարցերի քննության համար, որոնք, որպես կանոն պահանջում են նորմատիվային որոշումներ և իրավական բարեփոխումներ:

Նմանատիպ դիլեմաների առաջ է կանգնում նաև միջազգային դատարանը, որը պետք է, իմ կարծիքով, ցուցաբերի բավականին զուսպ, այսինքն՝

պահպանողական մոտեցում այն հարցերում, որոնք հստակորեն անցնում են անհատական գործի լուծման սահմանը՝ հատկապես այն դեպքերում, երբ դրանք արդեն իսկ գոյություն ունեցող միջհամայնքային հարաբերությունների համակարգի անբաժան մասը են: Ինչ վերաբերում է այս գործին, ապա թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կապակցությամբ «խախտման վճիռ» կայացնելը կարող է հանգեցնել նմանատիպ հարյուր-հազարավոր գործերի հարուցման, երբ գանգատները կներկայացվեն լեգիտիմ ակնկալիքով, որ Հանձնաժողովի զեկույցը և Դատարանի վճիռները կհետևեն տվյալ նախադեպին: Այդ դեպքում Դատարանը փաստորեն կայացրել է ընդարձակ որոշում՝ լայնածավալ հարցի վերաբերյալ միջազգային հանրային իրավունքի բնագավառում:

8. Բացի դրանից, այս գործը կարող է իր ազդեցությունը ունենալ Դատարանի դերի վրա նաև այլ տեսանկյունից, ինչի վերաբերյալ ես նույնպես բացառիկ հնարավորություն ունեցա կարծիքներ փոխանակել և կիսել դատավոր Վիլդիաբերիի հետ: Սա կարող է ներգործել այն մոտեցումների վրա, որ Դատարանը կարող է ունենալ այնպիսի նորանկախ պետությունների առնչությամբ գործերի վերաբերյալ, ինչպիսիք են Խորվաթիան, Բոսնիան և Հերցեգովինան կամ Ռուսաստանը: Դատարանը կարող է ստիպված լինել քննելու, թե ինչ է տեղի ունեցել Խորվաթիայի Կրայինա շրջանում, Սերբական Հանրապետությունում (Republika Srpska), Բոսնիայի և Հերցեգովինայի այլ շրջաններում կամ Չեչնյայում: Այս դեպքում Կոնվենցիայով պաշտպանվող մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վիճարկվող խախտումները կհաշվվեն ոչ թե «ընդամենը» հարյուրներով և հազարներով, այլ միլիոնավոր հնարավոր գործերով:

Ես մեծագույն ակնածանք ունեմ այն սկզբունքային դիրքորոշման հանդեպ, որ Դատարանի միակ խնդիրը կայանում է անհատների հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու մեջ՝ անկախ դրանց քանակից: Մյուս կողմից, ես չափազանց կարևորում եմ լուրջ մոտեցումը՝ մարդու իրավունքների վերաբերյալ խնդիրներ լուծելիս Դատարանի արդյունավետության հավասարաչափ լեգիտիմ հարցին: Այս խնդիրն ավելի է բարդանում անհատական գործերի կապակցությամբ, որոնցից մեկն է այս գործը, որոնք անխզելիորեն կապված են և կախված այն լուծումից, որ կտրվի լայնածավալ միջհամայնքային էթնիկական և/կամ քաղաքական հակամարտությունների:

9. Վերջնական վերլուծությունները և վերոնշյալ եզրակացությունների ամողջությունը բերեցին ինձ ավելի զուսպ դատական մոտեցում ցուցաբերելու տվյալ գործի նկատմամբ, և ես ընդունեցի *exseptio ratione temporis*-ի վավերականությունը:

Դատավոր Փետիտիի չհամընկնող կարծիքը

(Թարգմանություն)

Ես քվեարկեցի փոքրամասնության հետ՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման դեմ՝ ելնելով մի շարք պատճառներից: Նախնական

առարկությունների վճռում ես արդեն իսկ արտահայտել եմ իմ մոտեցումները հետևյալ կերպ.

« Նախնական առարկությունների քննության փուլում, դմբաց նիստում կայացած քննարկումից հետո, որը սահմանափակվել է այդ առարկությունների վերաբերյալ Կողմերի վերլուծությամբ, Եվրոպական դատարանը չկարողացավ նկատել բոլոր հիմնախնդիրները, ինչը հանգեցրեց այս առարկությունները գործի հանգամանքների հետ միավորելուն: Ժամանակակից իրավունքի տեսաբանները Թուրքիայի հայտարարության վերլուծությունը չեն համարել դյուրին հարց չէ (տե՛ս Կլաուդիո Ջանգի, Քրիստիան Տոմուշատ, Ուոլտեր Բալին, Պիեռ-Յենրի Իմբերտ, Քրիստոֆեր Լաշ և այլն):

Իրավիճակի ամբողջական գնահատումը՝ սկսած ինքնիշխանության և իրավագործության գաղափարներից, հնարավոր կդարձնեք այն չափանիշների վերանայումը («զավթում», «բռնակցում», Յուսիսային Կիպրոսում Ժնևի կոնվենցիաների տարածքային կիրառումը, «միջազգային հարաբերությունների իրականացում»), որոնց հիման վրա ՄԱԿ-ը վերլուծել է այն խնդիրը, արդյոք ճանաչել, թե՛ ոչ, Յուսիսային Կիպրոսը որպես պետություն, և ՄԱԿ-ի Կանոնադրության կիրառման խնդիրը (տե՛ս Անվտանգության խորհրդի 930-րդ բանաձևը): Եվրոպական կոնվենցիայի ինստիտուտների պարտավորությունները նմանատիպ բարդությունների դեպքում արտացոլում են անդամ պետությունների փոխադարձ պարտավորությունը՝ ապահովելու անհատների և հիմնարար իրավունքների լավագույն և ամենալայն պաշտպանությունը համապատասխան երկրներում՝ Կոնվենցիայի դրույթները կիրառելով դրանց նպատակին և առարկային համապատասխան»: (անհատական չհամընկնող կարծիք, Շարքեր A, թիվ 310, էջ 43-44)

« Իրավացի է, որ իրավագործության հասկացությունը չի սահմանափակվում զուտ Բարձր պայմանավորվող կողմերի տարածքով, սակայն, միևնույն է, անհրաժեշտություն կա բացատրելու, թե կոնկրետ ինչու է Պայմանավորվող կողմն իրավագործ, և որն է այն ձևը և եղանակը, որով այն պետք է իրականացվի: Նշում ենք, որ 62-րդ կետում մեջբերված Դրոզդը և Ջանուսեկն ընդդեմ Ֆրանսիայի և Իսպանիայի գործով վճռում Դատարանը վերջ ի վերջո գտել է, որ խախտում չի եղել:

Այն, որ Պայմանավորվող կողմի պատասխանատվության հարցը կարող է ծագել իր տարածքից դուրս ռազմական գործողությունների հետևանքով, չի նշանակում իր իրավագործության իրականացում: 64-րդ կետում տեղ գտած եզրակացությունը չի հիշատակում իրավագործության հարցը որոշելու որևէ չափանիշի: Այդ իսկ պատճառով մենք գտնում ենք, որ կա հակասություն 62-րդ կետում Դատարանի ասածի և 64-րդ կետում տեղ գտած եզրակացության միջև, և այս հակասությունն ի հայտ է գալիս եզրափակիչ մասում 2-րդ կետի քվեարկության ժամանակ: Մինչև առարկության վերաբերյալ որոշում կայացնելը՝ Դատարանը պետք է նախ ըստ էության քննության առներ այն հարցը, թե ով ուներ կամ չուներ իրավագործություն» (Դատավոր Գյուլչուկլուի և իմ համատեղ չհամընկնող կարծիքը, loc. cit., էջ 35):

Սա է պատճառը, որ ես կողմնակիցն էի *ratione temporis* առարկությունը ընդունելու և տարբերակելու *ratione loci* և *ratione personae* առարկությունները: Ոչ երկրորդ քննարկումները, ոչ էլ հուշագրերը չեն տրամադրել փաստերի մանրամասն գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները: Թիվ 1

արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ կողմերի փաստարկները ևս չեն նպաստել սեփականության իրավունքին հնարավոր միջամտության համար պատասխանատվության խնդրի պարզաբանմանը՝ չնայած այն հանգամանքին, որ սեփականություն հանդիսացող տարածք ազատ մուտք գործելը կախված է գոտիների միջև տեղաշարժվելու ազատությունից:

Մեծամասնությունը վճռել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը խախտվել է հիմնականում այն պատճառով, որ 1974թ. ի վեր դիմողին մերժվել է իր սեփականության տարածքը մուտք գործելու համար, ինչը իր հերթին հանգեցրել է այդ սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելը, ինչն իր հերթին հանգեցրել է այդ սեփականության նկատմամբ վերահսկողության կորստին. հարց, որի վրա տարածվում է այդ դրույթի առաջին նախադասությունը: Նրանք գտազել են, որ միջամտությունն արդարացված չէր, և քննադատել են Թուրքիայի կառավարությանն այն բանի համար, որ նա չի բացատրել, թե ինչպես է 1974թ. հետո տեղահանված կիպրացի թուրք փախստականներին վերաբնակեցնելու անհրաժեշտությունն արդարացնում տկն Լուիզիդուի նկատմամբ կիրառված միջոցները: Անշուշտ, Դատարանն շարունակելով ավելացրել է, որ չի կարող ընդունել նմանատիպ արդարացում: Բոլոր դեպքերում, ես համարում են, որ դա երկրորդական կարևորության եղրակացություն է:

Թվում է, թե այդ անհրաժեշտությունն ակնհայտ է, և եթե իրադարձությունները վերաբնակեցման գործընթացն անխուսափելի էին դարձրել, ապա դա կարող էր արդարացնել միջամտությունը: Այս հարցի փաստերը կարիք ունեին մանրամասն ուսումնասիրության: Լուիզիդուի գործը՝ որպես ամբողջություն, չէր կարող վերլուծվել այնպես, ասես այն վերաբերում էր ընդհանուր օրենքի հիման վրա *de facto* բռնագրավմանը՝ առանց փոխհատուցման: Տեղահանվածների տեղաշարժը մի գոտուց մյուսը, զանգվածային մեկնումը, ինչն իր ազդեցությունն ունեցավ երկու համայնքների վրա էլ՝ միջազգային իրադարձությունների հետևանք էր, որի համար պատասխանատվությունը չի կարող վերագրվել՝ հիմնվելով Լուիզիդուի գործի վրա, այլ պետք է փնտրվի միջազգային հարաբերությունների բնագավառում:

1974թ. ի վեր, առանց թուրքական զինված ուժերի ներխուժումը Հյուսիսային Կիպրոս՝ միջազգային իրավունքի իմաստով ՄԱԿ-ի կողմից որպես ագրեսիա որակելու, տեղի են ունեցել մի շարք բանակցային գործընթացներ՝ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և Եվրամիության միջնորդությամբ: Բացի դրանից, Դատարանը չի քննարկել այն հարցը, թե արդյոք այդ ներխուժումն օրինական էր (տե՛ս վճռի 56-րդ կետը): Երկու համայնքների բաժանման գոտում միջազգային զինված ուժերի տեղակայման որոշումը անհնարին էր դրածրել երկու շրջանների միջև մարդկան ազատ տեղաշարժը, և դրա պատասխանատվությունը չի կարող վերագրվել միայն Թուրքիայի կառավարությանը:

Դատարանի հղումը Կիպրոսի Հանրապետության և «ՀԿԹՀ»-ի նկատմամբ միջազգային հանրության դիրքորոշմանը (տե՛ս վճռի 42-րդ կետը) բացատրված չէ: Սակայն, միթե՞ հնարավոր է 1996թ. ներկայացնել այս «միջազգային հանրության» տեսակետները՝ որպես անփիճարկելի, հաշվի առնելով, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի ամենավերջին բանաձևերը ընդունվել են դեռևս մի քանի տարի առաջ, և որ Դատարանը տեղյակ չէր միջազգային միջնորդների առաքելություններին: Դատարանը համարում էր, որ 1974թ. հակամարտության հետևանքների «պատասխանատվությունը» միայն Թուրքիայինն է: Իմ համոզմամբ, մինչև Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված իրավագրության ձևով պարտականությունների հարցի վերաբերյալ որևէ որոշում կայցնելը, նման

բարդության դիվանագիտական իրավիճակը պահանջում էր Հանձնաժողովի պատվիրակության կողմից միջազգային ուժերի և արդարադատության իրականացման դերի երկարատև և մանրազննին քննություն: «ՀԿԹՀ»-ի կարգավիճակի և պարտավորությունների խնդիրը պետք է ենթարկվեր ավելի ամբողջական քննության: Ճիշտ է, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան չի ընդունել «ՀԿԹՀ»-ն որպես անդամ, սակայն ճանաչման բացակայությունը խոչընդոտ չէ ներպետական և միջազգային լիազորությունների իրականացման համար (տե՛ս վճռի 51-րդ կետը): Տվյալ դեպքում կարելի է համեմատություն անցկացնել Թայվանի գործի հետ:

Բացի դրանից, Դատարանն ընդունել է քաղաքացիական իրավունքի, մասնավոր իրավունքի, ինչպես նաև ծնունդների, մահերի և ամուսնությունների գրանցման ոլորտում «ՀԿԹՀ»-ի իշխանությունների կողմից որդեգրված միջոցների վավերականությունը՝ առանց նշելու իր որոշումն արդարացնող իրավունքի այս ճյուղերի և սեփականության հարցերը կարգավորող ճյուղի միջև տարբերակում կատարելու պատճառները: Տկն Լուիզիդուի գանգատի հանգամանքների վերաբերյալ կան մի շարք անորոշություններ, որոնք չեն պարզաբանվել ներկայացված նյութերում: 1974թ. ի վեր նա չի ձեռնարկել որևէ գործողություն, որով ակնհայտորեն կարտահայտեր Հյուսիսային Կիպրոսում բնակություն հաստատելու իր մտադրությունը: Նա նաև չի հարուցել որևէ գործ՝ պաշտպանելու համար իր սեփականության իրավունքը 1974-1985թթ. ընկած ժամանակահատվածում նույնիսկ Կիպրոսի Հանրապետության դատարաններում, չնայած նրա այն պնդմանը, որ վերջինս միակն է, կղզու ողջ տարածքում ունի լեգիտիմ իրավագործություն և ինքնիշխանություն: Նա չի դիմել Հանձնաժողովին մինչև 1989թ., և նա չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ դիմել է ՄԱԿ-ի զինված ուժերին՝ սահմանն անցնելու և սահմանային գոտում տեղաշարժվելու թույլտվություն ստանալու համար: Այն դեպքում, երբ նրա գանգատը հիմնականում վերաբերում է սեփականության մուտքի իրավունքին՝ նրա քաղաքացիական հայցի հիմքերը դեռևս ունեն ճշգրտման կարիք: Սեփականության օգտագործման իրավունքի կորուստը հիմնականում պայմանավորված է սահմանային գծի ստեղծմամբ, և ոչ թե տեղական իշխանությունների որևէ գործողությամբ:

Դատարանը համարում է, որ իրավագործություն է ձեռք բերել 1990թ. հունվարի 22-ին (տե՛ս վճռի 32-րդ կետը): Անկախ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի հայտարարության ձևակերպումից բխող ընդունելիության խնդրից՝ ակնհայտ չէ, որ տեղի է ունեցել տկն Լուիզիդուի սեփականության իրավունքի շարունակական խախտում: Ընդհակառակը, կարելի է համարել, որ տեղի է ունեցել միաժամանակյա խախտում 1974թ. պետական հեղաշրջման ժամանակ՝ նույնիսկ մինչև 1985թ. տեղական իշխանությունների կողմից իրականացված de facto բռնազրավումը և այն ժամանակահատվածում, երբ տիրում էր անկայուն վիճակ, որը Հանձնաժողովն ի վիճակի չէրավ պարզաբանելու՝ չկարողանալով տարանջատել տկն. Լուիզիդուի անձնական դեպքն ընդհանուր պատմական իրավիճակից, որն իր ազդեցությունն ուներ նաև կիպրական թուրք համայնքի վրա: «Շարունակական խախտում» հասկացությունը տեղին չէ, ինչպես գտել է Հանձնաժողովը իր զեկույցի 97-րդ և 98-րդ կետերում:

Հարկ է նշել նաև, որ Հանձնաժողովն իր եզրակացությունները սահմանափակել էր այն հարցով, թե արդյո՞ք Թուրքիան իրականացնում է իրավագործություն սահմանային գոտում, և ոչ թե ամբողջ Հյուսիսային Կիպրոսի տարածքում (տե՛ս գանգատներ թիվ 6780/74, 6950/75 և 8007/77), ինչպես նաև եզրակացրել էր, որ դիմողների ձերբակալման, կալանավորման և դատավարության համար վերը նշված գործերում չպետք է պատասխանատու

համարվեր Թուրքիան (տե՛ս վճռի 51-րդ կետը և Թուրքիայի կառավարության հուշագրի 114-րդ կետը): 1993թ. հուլիսի 8-ի իր զեկույցում Յաննասիսը խուսափել է որևէ որոշում կայացնելուց «ՅԿԹՅ»-ի կարգավիճակի վերաբերյալ:

Սա զգալիորեն հեռացնում է մեզ այնպիսի իրավիճակներից, որոնք Դատարանը որակել էր որպես շարունակական խախտում այնպիսի գործերում, ինչպես, օրինակ, Սուրբ Մենաստանների գործն է: Շարունակական խախտման գաղափարի շրջանակները և սահմանները պետք է ճշտվեին:

Ինչպիսին էլ լինեին 1974թ. պետական հեղաշրջման ժամանակ ստանձնած կամ նույն տարում թուրքական զինված ուժերի ժամանումից բխող պարտականությունները, որքան էլ միջազգային հանրությունը տարակուսեր՝ փորձելով կարգավորել 1974թ. Կիպրոսում առաջացած միջազգային խնդիրները, և այն ժամանակ, երբ հիմնվեց «ՅԿԹՅ»-ն, կամ երբ Թուրքիան հանդես եկավ Եվրոպայի խորհրդին ուղղված իր հայտարարությամբ, այդ պարտականությունները՝ լինելով տարաբնույթ և ունենալով տարբեր ծագում, միևնույն է, երկու համայնքների ամբողջական հիմնախնդիրը (որոնք չեն հանդիսանում միջազգային իրավունքի իմաստով ազգային փոքրամասնություններ) ավելի կապված է քաղաքականության և դիվանագիտության հետ, քան եվրոպական դատական վերահսկողության հետ, որը հիմնաված է տկն Լուիզիդուի առանձին գործի և թիվ 1 արձանագրության համաձայն նրա իրավունքների վրա:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 1990թ. ի վեր չի եղել ոչ մի միջպետական գանգատ, որը Դատարանին կներկայացներ Կիպրոսում գոյություն ունեցող ամբողջ իրավիճակը: Դա պերճախոս ապացույցն է այն փաստի, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները փորձում են դիվանագիտական զգուշությամբ վերաբերվել քառսային պատմական իրադարձություններին, որոնք կարող են դրական ուղղվածություն ստանալ շնորհիվ ազգերի իմաստության:

Դատավոր Գյուլբուքլուի չհամընկնող կարծիքը (Թարգմանություն)

Ես համաձայն չեմ մեծամասնության հետ բոլոր կետերով և առաջին հերթին Դատարանի իրավագրության մասին Թուրքիայի կառավարության *ratione temporis* նախնական առարկության մերժման առնչությամբ: Սույն չհամընկնող կարծիքի հիմնական շարժառիթն այն է, որ այն փաստը, որ այս գործից բխում են իրավական և քաղաքական բարդություններ, որոնք ամբողջովին դուրս են ինչպես Կոնվենցիայով սահմանված գաղափարական շրջանակից, այնպես էլ Դատարանի՝ մինչ այժմ գոյություն ունեցող, ամբողջ նախադեպային իրավունքից:

1. Նախ և առաջ այս վճիռը պարունակում է լուրջ մեթոդաբանական սխալներ: Ինչպես ես արդեն նշել եմ նույն գործի նախնական առարկությունների վճռի վերաբերյալ իմ չհամընկնող կարծիքում (1995թ. մարտի 23-ի վճիռ, Շարքեր A, թիվ 310)՝ Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործի կենտրոնական իրավական խնդիրը՝ իրավագրության և պատասխանատվության հարցն է՝ Կոնվենցիայի նպատակներով: Վճիռը ոչ միայն չի առաջարկում այս խնդրի որևէ լուծում, այլև հանդուգն կերպով ներխուժում է բարձր քաղաքականության ոլորտ, այն է՝ Դատարանը սահմանում է Յյուսիսային Կիպրոսում Թուրքիայի ներկայության կարգավիճակը և «գնահատում» է Յյուսիսային Կիպրոսի Թուրքական Յանրապետության գոյության իրավական գոյությունը: Երկու հարցն էլ

ամբողջովին դուրս են Ղատարանի իրավագործության շրջանակից, և ընդդատյա են այլ մարմինների: Այլ կերպ ասած, Ղատարանն ստեղծել է իր սեփական տվյալների բազան, որպեսզի կարողանա «որոշում» կայացնել մի գործի վերաբերյալ, որ հավանական է, կդառնա նմանատիպ գործերի մի ամբողջ շարքի նախատիպ, որոնք, ամենայն հավանականությամբ, պետք է լուծվեն քաղաքական մարմինների կողմից: Մինչ այսօր, ամեն անգամ, երբ Սրասբուրգի վերահսկման ինստիտուտներն առնչվել են միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի կիրառմանն առնչվող որևէ գործի, նրանք շատ մեծ զգուշություն են դրսեվորել, և նմանատիպ գանգատներն ընդունելիության փուլից առաջ չեն գնացել: Հետաքրքրական է, օրինակ, որ նույնիսկ այս գործում Հանձնաժողովը, 1993թ. հուլիսի 8-ի իր զեկույցում, դիմողի այն պնդումների վերաբերյալ, որ նա անօրինականորեն զրկվել է իր ունեցվածքից, խելամտորեն հայտարարել է. « Հանձնաժողովը գտնում է, որ այս կապակցությամբ իրենից չի պահանջվում քննության առնել «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» կարգավիճակը: Նա նշում է, որ 1989թ. մարտի 19-ի ցույցը, որի ընթացքում Հյուսիսային Կիպրոսի տարածքում դիմողը ձերբակալվել էր, խախտում էր Կիպրոսում բուֆերային գոտու նկատմամբ հարգանքի վերաբերյալ պայմանավորվածությունները... Այն դրույթները, որոնց հիման վրա դիմողը ձերբակալվել և կալանավորվել էր... կոչված էին պաշտպանելու հենց այս գոտին: Սա չի կարող համարվել կամայականություն» (տե՛ս զեկույցի 82-րդ կետը): Քրիստոստոմոսը և Պապաքրիստոստոմոսն ընդդեմ Թուրքիայի գործով զեկույցում Հանձնաժողովը նշել է. « ... Հանձնաժողովը չի համարում, որ կոչված է լուծելու այն շրջանի կարգավիճակի հարցը, որտեղ տեղի է ունեցել դիմողների ձերբակալումը: Այս կապակցությամբ նա վկայակոչում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույցի 11-րդ կետի (բ) ենթակետը... և 1989թ. Պայմանագրի 6-րդ կետը...» (տե՛ս զեկույցի 153-րդ կետը):

2. Ինչ վերաբերում է իրավագործությանը, ապա այստեղ նույնպես Ղատարանի այս վճիռն անցնում է այս հարցի վերաբերյալ իր մինչ այսօր գոյություն ունեցող նախադեպային իրավունքի սահմանները:

Բոլոր այն դեպքերում, երբ իրավագործությունը չի բխում Պայմանավորվող կողմի իրավական համակարգի տարածքային ոլորտից, դրա առկայության փաստը պետք է ակնհայտորեն հաստատվի, քանի որ այս դեպքերում իրավական տեսանկյունից ճիշտ չէ խոսել Կոնվենցիայի *ratione loci* կիրառման մասին: Վկայակոչում են վերոնշյալ Լուիզիդուի վճռի՝ իմ չհամընկնող կարծիքը, ինչպես նաև թիվ 16137/90 գանգատի ընդունելիության վերաբերյալ Հանձնաժողովի 1990թ. մարտի 12-ի որոշումը, որը կապված էր Հոնկոնգի նկատմամբ Կոնվենցիայի կիրառման հետ (Որոշումներ և զեկույցներ (DR) 65, էջ 330 et seq.)

Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի գործով (թիվ 6780/74 և 6950/75, DR 2, էջ 136) 1975թ. մայիսի 26-ի իր որոշման մեջ Հանձնաժողովն արդեն ընդունել էր նույն դիրքորոշումը: Այդ որոշումը պարզորեն ցույց է տալիս, որ հարցը կայանում է ոչ թե Կոնվենցիայի *ratione loci*, այլ *ratione personae* կիրառման մեջ:

Այս մոտեցումն իր հետզա պարզաբանումն է գտել այլ որոշումներում, որտեղ Հանձնաժողովը արտահայտել է այն կարծիքը, որ պետական պաշտոնյաների, ներառյալ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների գործողությունները հանգեցնում են նրան, որ « այլ անձանք կամ նրանց գույքը գտնվում են Պետության իրավագործության ներքո՝ այնքանով, որքանով նրանք գործադրում են իրենց իշխանությունը այդ անձանց կամ սեփականության նկատմամբ» (գանգատ թիվ 17392/90, DR 73, էջ 193, և գանգատ թիվ 7547/76, DR 12, էջ 73):

Դրոզը և Ջանուսեքն ընդդեմ Ֆրանսիայի և Իսպանիայի վճռում Դատարանը, նշելուց հետո, որ Անդորրայի Իշխանությունը չի հանդիսանում «Ֆրանսիայի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության ... ընդհանուր տարածք, և չի հանդիսանում ֆրանս-իսպանական կոնդոմինիում (համատիրություն)», նույնպես եզրակացրել է, որ չկար *ratione loci* իրավագործություն: Իրավագործության այդ կատեգորիան բացառելուց հետո է միայն Դատարանը անդրադարձել *ratione personae* իրավագործության առկայության հարցին, և ինչը կարևոր է՝ վերը մեջբերված նախադեպային իրավունքի հիման վրա (1992թ. հունիսի 26-ի վճիռը, Շարքեր A, թիվ 240, էջ 29, կետ 91):

Քրիստոստոմոսի և Պապաքրիստոմոսի գործերի վերաբերյալ իր զեկույցում Հանձնաժողովը նկատել է. «Հանձնաժողովը, հաշվի առնելով վերը նշված զարգացումները և չգտնելով Թուրքիայի իշխանությունների ուղղակի միջամտության ապացույցներ դիմողների կալանավորմանը, և 1989թ. հունիսի 19-ի ձերբակալությունից հետո՝ նրանց դեմ հարուցված վարույթին, չի գտնում հիմքեր Կոնվենցիայի համաձայն այս գործողությունները Թուրքիային վերագրելու համար» (տե՛ս զեկույցի 170-րդ կետը):

Սույն վճիռը խախտում է մինչ այժմ գոյություն ունեցող նախադեպային իրավունքը, քանի որ քննության առնելիս *ratione personae* իրավագործության հարցը՝ այն կիրառում է *ratione loci* իրավագործությունը որոշելու չափանիշները, չնայած դրա համար չկար որևէ նախապայման: Այսպիսով, առաջին անգամ Դատարանն ընդունել է վճիռ միջազգային իրավական կարգավիճակի վերաբերյալ, որը դուրս է Կոնվենցիայի վերահսկման մեխանիզմի համաձայն իրեն տրված լիազորությունների շրջանակից: Այս վճռում Դատարանը Թուրքիայի իրավական համակարգը տարածում է Հյուսիսսային Կիպրոսի վրա՝ առանց մտածելու նմանատիպ մոտեցման քաղաքական և իրավական հետևանքների մասին:

3. Ես նաև կցանկանայի ընդգծել, որ Հյուսիսսային Կիպրոսը ոչ միայն չի գտնվում Թուրքիայի իրավագործության ներքո, այլ նաև այնտեղ գոյություն ունի (քաղաքական և սոցիալական առումով) ինքնիշխանություն, որն անկախ է և ժողովրդավար: Բոլորովին կարևոր չէ այն, որ այդ իշխանությունն իրավական առումով չի ճանաչվել միջազգային հանրության կողմից: Կոնվենցիան կիրառելիս՝ որոշիչ տարրերն իրական փաստացի հանգամանքներն են: Ե՛վ Հանձնաժողովը, և՛ Դատարանը բազմիցս հայտարարել են, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն «իրավագործության» հասկացությունը տարածվում է ինչպես *de facto*, այնպես էլ *de jure* իրավագործությունների վրա: Հյուսիսսային Կիպրոսում չկա «վակուում»՝ *De jure* թե *de facto*, այլ այնտեղ կա քաղաքականապես կազմակերպված հասարակություն՝ անկախ այն անվանումից և որակումից, որ որևէ մեկը կտա դրան՝ իր սեփական իրավական համակարգով և իր սեփական պետական իշխանությամբ: Այսօր ո՞վ կարող է հերքել Թայվանի գոյությունը: Սա է պատճառը, որ Հանձնաժողովը Քրիստոստոմոսի և Պապաքրիստոմոսի գործերի վերաբերյալ զեկույցում որոշելով դիմողների կալանավորման օրինականությունը, ուսումնասիրել է Հյուսիսսային Կիպրոսում գործող օրենքը, և ոչ թե Թուրքիայի օրենքը (տե՛ս զեկույցի 148, 149 և 174 կետերը):

4. Այժմ ժամանակն է անդրադառնալու խնդրի բուն մասին: Ես քվեարկել եմ *ratione temporis* նախնական առարկությունն ընդունելու կողմ և դեմ՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրելուն: Ինչպես իրավացիորեն նշել էր իր չհամընկնող կարծիքում Դատարանի փոխնախագահ՝

դատավոր Բերնհարդտը՝ մինչ գործի հիմնական երկու ասպեկտների քննարկմանն և անցնելը, որոշ ընդհանուր մեկնաբանություններ անխուսափելի են:

Ես լիովին համաձայն եմ Դատավոր Բերնհարդտի կարծիքի այն հատվածին, ուր նա ասում է. «Սույն գործի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հնարավոր չէ մեկ զոհի վիճակն անջատել՝ բարդ պատմական զարգացումներից և նույնքան բարդ ներկա իրավիճակից: Իրականում, Դատարանի վճիռը վերաբերում է ոչ միայն տկն Լուիզիդուին, այլ նաև այն հարյուր-հազարավոր կիպրացի հույներին, որոնք ունեն (կամ ունեցել են) սեփականություն Յուսիսային Կիպրոսում: Այն կարող է նաև ազդեցություն ունենալ այն կիպրացի թուրքերի վրա, որոնց արգելվում է այցելել և զբաղեցնել Զարավային Կիպրոսում գտնվող իրենց սեփականությունը: Դա կարող է վերաբերել նույնիսկ երրորդ երկրների այն քաղաքացիներին, որոնց արգելվում է այցելել այն տարածքներ, որտեղ նրանք ունեն սեփականություն և տներ: Կիպրոսի երկու մասերի միջև փաստացի սահմանի հետևանքն այն է, որ բազմաթիվ անհատներ անջատվել և բաժանվել են իրենց սեփականությունից և իրենց նախկին տներից»:

Կարելի է ասել, որ թուրքական և հունական համայնքների միջև ծագած կիպրական հակամարտությունը հիմնականում պայմանավորված է 1974թ. պետական հեղաշրջումով, որնիրականացվեց կիպրացի հույների կողմից՝ Զունաստանին միանալու (enosis) ակնհայտ մտայնությամբ, ինչն արժանացավ Կիպրոսի այն ժամանակվա ղեկավարի կատաղի քննադատության միջազգային մարմինների առջև: Այդ պետական հեղաշրջումից հետո՝ Թուրքիան միջամտեց՝ ապահովելու համար Կիպրոսի Զանրապետության պաշտպանությունը՝ նախկինում երեք շահագրգիռ կողմերի միջև (Թուրքիայի, Միացյալ Թագավորության և Զունաստանի) կնքված Երաշխիքների պայմանագրի հիման վրա, որն այս պետություններին տալիս էր իրավունք՝ առանձին կամ միասին միջամտելու այն դեպքերում, երբ դա կպահանջվեր էլնելով իրավիճակից: 1974.թ. պետական հեղաշրջման հետևանքով ստեղծված իրադրությունն առաջին հերթին հենց այդ էր պահանջում: Վերը շարադրվածում, ես, իմիջիայլոց, չեմ անդրադառնում այն արյունալի իրադարձություններին և պատահարներին, որ շարունակաբար տեղի էին ունենում դեռ 1963թ. սկսած:

Երաշխիքների պայմանագրի այս դրույթի կիրառումը փոխեց մինչ այդ գոյություն ունեցող քաղաքական իրադրությունը և պատճառ հանդիսացավ երկու համայնքների երկարաժամկետ բաժանման համար, ինչը փաստորեն տեղի է ունեցել դեռևս 1963թ.:

Ես լիովին համաձայն եմ դատավոր Բերնհարդտի հետ, որ 1974թ. պետական հեղաշրջումից հետո Կիպրոսի «դրամայում» դեր էին խաղում մի քանի դերակատարներ և հանգամանքներ, ներառյալ «բնակչության տեղաշարժերը հյուսիսից հարավ և հարավից հյուսիս»: Նա շարունակում էր. «Տարաբնույթ ազդեցությունների և իրադարձությունների հետևանքը «երկաթյա պատն» է, որն արդեն երկու տասնամյակ է, ինչ գոյություն ունի, և որը վերահսկվում է ՄԱԿ-ի զինված ուժերի կողմից: Մինչ այսօր Կիպրոսի վերամիավորման նպատակով բոլոր բանակցությունները և բանակցությունների առաջարկները մատնվել են անհաջողության: Ո՞վ է պատասխանատու այս անհաջողությունների համար: Մի՞թե միայն մեկ կողմը: Արդյո՞ք հնարավոր է հստակորեն պատասխանել այս և բազմաթիվ այլ հարցերի, և այդ պատասխանների հիման վրա կայացնել իրավական որոշումներ:

Տկն Լուիզիդուի գործը հետևանք չէ թուրք զինվորականների առանձին գործողության, որն ուղղված էր նրա սեփականության և տեղաշարժվելու ազատության դեմ, այլ հետևանք է 1974թ. սահմանագծի առաջացման և դրա մինչ այսօր փակ լինելուն»:

ՄԱԿ-ի զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող բուֆերային գոտու ստեղծումից հետո հյուսիսից հարավ և հակառակը տեղաշարժվելն արգելված էր, և թուրքական ու կիպրական իշխանությունների ընդհանուր համաձայնությամբ, տեղի ունեցավ բնակչության փոխանակում, որի ժամանակ ութսուն հազար կիպրացի թուրքեր տեղափոխվեցին Կիպրոսի հարավից դեպի հյուսիս:

Ես մեկ անգամ ևս պետք է ընդգծեմ, ինչն արդեն արել եմ այս չհամընկնող կարծիքի սկզբում, որ տվյալ գործում մենք գործ ունենք քաղաքական իրավիճակի հետ և անհնարին է իրարից անջատել այս գործի քաղաքական և իրավական ասպեկտները:

Մեր Դատարանի համար գործն ունի ևս մեկ քաղաքական շեշտադրություն: Նրա վճիռը վատահորեն կունենա իր հետևանքները Եվրոպայի խորհրդի նոր անդամ պետությունների, մասնավորապես, Ճափսկինում խորհրդային ռեժիմում գտնվող Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դեմ ներկայացվելիք ապագա գործերի վրա, որոնք սկիզբ են առնում դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմից:

Թուրքիան ճանաչել է Դատարանի իրավագործությունը միայն այն իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել 1990թ. հունվարի 22-ից հետո: Այդ սահմանափակումը բացառում է մինչև նշված ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ դատական որոշումները, նույնիսկ այն դեպքում, եթե դրանք անհամատեղելի են Կոնվենցիայով սահմանված պատասխանող պետության պարտավորությունների հետ:

Կոնվենցիայի հաստատություններն ընդունել են, որ «շարունակական խախտումների» հասկացությունը ներառում է այն խախտումները, որոնք սկիզբ են առել մինչև վճռական ամսաթիվը և շարունակվել են դրանից հետո: Սակայն այն դեպքերում, երբ վկայակոչվում է այս հասկացությունը, անհրաժեշտ է որոշակիացնել դրա շրջանակները և սահմանները: Կասկած չկա, որ կալանավորման և համապատասխան ամսաթվից առաջ և հետո հողի անօրինական գրավման դեպքում առկա է շարունակական խախտում, և որ վճռական ամսաթվից հետո ընկած ժամանակահատվածն ընկնում է Դատարանի իրավագործության տակ: Դատավոր Բերնհարդտի նման ես նույնպես համարում եմ, որ տվյալ գործում դիրքորոշումն այլ է, երբ որոշակի պատմական իրադարձությունն ստեղծել է « մի իրավիճակ, ինչպիսին է սահմանի փակումը, որի հետևանքով ավտոմատ կերպով հարուցվել են բազմաթիվ գործեր»: Այլապես, Ստրասբուրգի ինստիտուտները կբախվեին, պատմական իրադարձությունները, դրանց ի հայտ գալուց շատ տարիներ անց, վերազնահատելու և Կոնվենցիայի չափորոշիչները հետադարձ կերպով կիրառելու՝ դժվարին խնդրի հետ:

Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործում Յարավային Կիպրոսի կիպրացի հույների համար իրենց սեփականություն հանդիսացող տարածքներ մուտք գործելու և այնտեղ բնակվելու հնարավորության համար խոչընդոտ է հանդիսանում բուֆերային գոտու առկայությունը, որն իրենից ներկայացնում է երկու համայնքների անվտանգության ուժերի հետ համատեղ ՄԱԿ-ի զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող յուրօրինակ սահման, ինչը հիմնվում է նրանց միջև կնքված պայամնագրերի վրա: Դրա ստեղծումը, որը տեղի էր ունեցել մինչև 1990թ., այսինքն մինչև Թուրքիայի կողմից Դատարանի իրավագործության ճանաչումը, միաժամանակյա գործողություն էր, որը

սառեցրել է de facto գոյություն ունեցող քաղաքական բնույթի իրավիճակը: Գործի այսպիսի հանգամանքների պարագայում, մենք չենք հանդիպում «շարունակական իրավիճակի»՝ հակառակ Դատարանի մեծամասնության որոշմանը: Այդ իսկ պատճառով այս գործում չկա ոչ շարունակական խախտման, ոչ էլ դիմողի սեփականության իրավունքին միջամտության հարց: Այսպիսին է նաև Հանձնաժողովի որոշեցրած դիրքորոշումը, որը նշել էր՝ « դիմողը, որը ցույցի ժամանակ անցնելով Կիպրոսի բուֆերային գոտու սահմանը՝ ձերբակալվել էր, պահանջում է Կիպրոս կղզու տարածքում անարգել տեղաշարժվելու իրավունք՝ անկախ բուֆերային գոտու և դրա վերահսկման առկայությունից, իր պահանջը հիմնավորելով այն հայտարարությամբ, որ Հյուսիսային Կիպրոսի տարածքում ինքն ունի սեփականություն»: Ձեկույցը մայնուհետև ասվում է. « Հանձնաժողովն ընդունում է, որ տեղաշարժվելու ազատության սահմանափակումը՝ լինի դա հետևելով անձին ազատությունից զրկելու կամ որոշակի տարածքի կարգավիճակի հետևանք, կարող է անուղղակի կերպով ազդել այլ հարցերի վրա, ինչպիսին է, օրինակ, սեփականություն հանդիսացող տարածքը մուտք գործելը: Սակայն սա չի նշանակում, որ ազատությունից զրկելը կամ որոշակի գոտի մուտք գործելու հնարավորության սահմանափակումն ուղղակիորեն միջամտություն է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող իրավունքին: Այլ կերպ ասած՝ սեփականությունն անարգել տնօրինելու իրավունքն ինքնըստինքյան չի ներառում ազատ տեղաշարժվելու իրավունքը»: Համապատասխանաբար, Հանձնաժողովը վճռել է, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել (տե՛ս Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գանգատի վերաբերյալ Հանձնաժողովի զեկույցը, կետ 97, 98 և 101):